11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1999 ՇԱԲԱԹ 159 (1905)

# Azg

Azg armenian daily

## Մոսկվայի պայթյունը ահաբեկչություն է

ՄՈՍԿՎԱ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Պայթյունը Գուրյանովի փողոցում եղել է կանխամտածված եւ, հետեւաբար, խոսքը «ավելի շուտ ահաբեկչական գործողության մասին է», հաղորդում է ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության պաշտոնական ներկայացուցիչը: Ըստ նրա, այժմ վճռվում է Մոսկվայի դատախազության հարուցած քրեական գործի հոդվածը «վերառորակավորելու» հարցը: Հիշեցնենք, որ լույս հինգշաբթվա գիշերը տեղի ունեցած պայթյունից փլվել են ինը հարկանի տան երկու մուտքերը: Փորձագետների կարծիքով, պայթյունի ուժը կազմել է 300-400 կգ տրոտիլին համարժեք:

Ինչպես հայտարարել է Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովը, պայթյունի համար օգտագործվել է հեկսոգեն, որը սովորաբար կիրառվում է պատերազմական պայմաններում: Մայրաքաղաքի ղեկավարի հետ համաձայնել է եւ ՌԴ ԱԻՆ ղեկավար Սերգեյ Շոյգուն, որն ընդգծել է, որ ավերածությունների բնույթը մոսկովյան ողբերգության վայրում շատ նման է Կասպիյսկում տեղի ունեցած պայթյունի հետեւանքներին:

ՄՈՒԹ ԱՇԽԱՐՀ

## Ոչ ֆորմալ՝ սպեցիալ ոլորտի հետազոտություն

### *Վահրամ Ավանեսյանը նոր ծրագիր է իրականացնում*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Հայաստանում սպեցիալ գիտական բնորոշմամբ ոչ ֆորմալ ոլորտի գնահատականները խիստ տարբեր են: Բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ վկայակոչում են 40-60 տոկոսի ցուցանիշներ, որ նշանակում է, թե Հայաստանում առկա տնտեսական գործունեության եւ դրամաշրջանառության իրական ծավալների գրեթե կեսը չի ձեւակերպվում, այսինքն չի հարկվում: Բարեհաջող շրջանցելով պաշտոնական բանկային, գանձապետական կառույցները, վերջին հաշվով բյուջեն: Ըստ տարածված ոմանց գրեթե 800 մլն դոլար Հայաստանում գտնվում եւ շրջանառվում է բանկային համակարգից դուրս: Եթե հաշվի առնենք, որ մեր ՀՆԱ-ն 2 մլրդ դոլար է, ապա այս ցուցանիշը տագնապահարույց է:

Մեր սպեցիալ ոլորտի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնում են ոչ միայն հայաստանյան տարբեր կազմակերպություններ, այլեւ միջազգային փորձագետներ: ՀՀ վիճակագրության, վերլուծությունների եւ պետեգիստրի նախարարությունում տնտեսական եւ կառուցվածքային բարեփոխումների նախկին նախարար Վահրամ Ավանեսյանն սկսել է իրագործել «Ոչ ֆորմալ ոլորտի» ծրագիրը, որի արդյունքները կարող են արդիական եւ վճռորոշ դառնալ հաստատես 2000 թ. պետբյուջեն իրատեսորեն մշակելու համար:

Հիշեցնենք, որ վարչապետ Վազգեն Սարգսյանը վերջերս ԱԺ-ում ինքնաթիռ գնահատական տվեց մեր սպեցիալ տնտեսության ծավալներին վկայակոչելով միջազգային կազմակերպությունների կարծիքները: Ըստ այդմ մեր ոչ ֆորմալ տնտեսական եւ դրամական գործառնությունները մեծ ծավալ չեն կազմում: Այս պնդումը, սակայն, փորձագետների շրջանակներում ըմբռնում չի գտնում: Փորձագետները փաստարկում են, որ նման գնահատականն ինչ-որ առումով ինքնարդարացում է, քանզի առ այսօր ոչ մի քաղաքական գործիչ չի կարող հավակնել սպեցիալ տնտեսության ֆիշ թե շատ էական մի հատված «լուսավորելու» կարողությամբ: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ ոչ ֆորմալ ոլորտի հերոսներն ընկերներ ունեն իշխանության տարբեր օղակներում:



## Գյումրիի Անի թաղամասը կունենա իր եկեղեցին՝ Սուրբ Հակոբ

Գյումրի քաղաքի նորակառույց Անի թաղամասը, որտեղ մոտավորապես 20.000 մարդ է ապրում, մեկ-երկու տարուց կունենա իր եկեղեցին, որը կոչվելու է Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի անունով:

Նոր կառուցվելիք եկեղեցու բարերարն է ամերիկահայ Սարգիս Հակոբյանը եւ ընտանիքը Պենսիլվանիայից:

Հինգշաբթի օրը տեղի ունեցավ ապագա եկեղեցու համար հատկացված ընդարձակ հողատարածքի օրհնության արարողությունը, բարերար Ս. Հակոբյանի, որդու եւ հարսի մասնակցությամբ: Օրհնության արարողությունը կատարեցին կաթողիկոսական տեղապահ Ներսես արք. Պողարյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանը, Գրիգորիս արք. Բունիաթյանը եւ Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Փառեն ծայրագույն վրդ. Ավետիքյանը: Արարողությանը ներկա էին նաեւ քաղաքապետ Միքայել Վարդանյանը, մարզպետի պաշտոնակատար Սեյրան Պետրոսյանը, ճարտարապետ Բ. Արզումանյանը, ՀԲԸՄիության Երեւանի գրասենյակի տնօրեն Աշոտ Ղազարյանը եւ ուրիշներ: Հիշեցնենք, որ Սարգիս Հակոբյանը ՀԲԸՄիության հայտնի բարերարներից է:

ՅԱԼԹԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

## Համագործակցության ուղիների որոնում

ՀՐԱՏՐ ՉՈՒՐՅԱՆ

Յալթա

Երեկ, օրվա երկրորդ կեսին Յալթայի Լիվադյան դղյակում աշխատանքն սկսեց «Բալթյան-սեւծովյան համագործակցություն. դեպի XXI դարի ինտեգրացված եվրոպա՝ առանց բաժանարար գծերի» միջազգային համաժողովը: Մասնակից խաղ պետություններից 13-ը ներկայացված են նախագահների մակարդակով: Ներկա են նաեւ 7 միջազգային կազմակերպությունների ղեկավարներ:

Հայաստանի պատվիրակությունը՝ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, Ղրիմի ԻՀ մայրաքաղաք Սիմֆերոպոլ ժամանեց տեղական ժամանակով 9:15-ին: Պատվո հանդիսությամբ օդանավակայանում ՀՀ նախագահին դիմավորողների թվում էին Ղրիմի ԻՀ Գերագույն ռադայի նախագահ Լ. Գրայը, ՂԻՀ վարչապետ Ս. Կունիցինը:

Յալթայի «Յուժնի» առողջարանում կարճատեւ հանգստից հետո տեղի ունեցավ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումը Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հետ:

Մինչ համաժողովի պաշտոնական բացումը, որ կատարեց Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչման, երկրների պատվիրակների ղեկավարները հավաքվեցին «Արտեկ» միջազգային մանկական կենտրոնում, որտեղ տեղի ունեցավ շախմատի 7-րդ համաշխարհային մանկական օլիմպիադայի բացման հանդիսավոր արարողությունը: «Արտեկ» ժամանելիս ՀՀ նախագահին դիմավորող պաշտոնյաներին ընկերակցում էին ՖԻԴԵ-ի նախագահ Կ. Իլյումժինովը, շախմատի հանրաճանաչ վարպետներ Ա. Կարպովը, Ն. Գաբրինդաշվիլին, Վ. Իվանչուկը: Բարձրաստիճան հյուրերը միասին միացրեցին շախմատի խորհրդանշական ժամացույցը:

Իսկ բուն համաժողովն ընթանում է 2 փուլով: Լիվադյան դղյակում քննարկվող թեմաների առնչությամբ իրենց տեսակետներն են ներկայացնում պատվիրակությունների ղեկավարները, իսկ «Յալթա» հյուրանոցում քննարկումներն ընթանում են փորձագիտական մակարդակով:

Տես էջ 8

## Ադրբեջանական բանակում համաճարակ է սկսվել

ԲԱՔՈՒ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ենի մուսավաթ» թերթը գրում է, որ ադրբեջանական բանակում զանգվածային համաճարակ է սկսվել զորամասերում տիրող հակասանիտարական պայմանների պատճառով: Տարբեր զորամասերում 488 զինվոր հիվանդացել է որովայնային տիֆով: Նրանցից շատ քչերն են տեղափոխվել զորամասերի բուժկետեր: Հարյուրավոր զինվորներ հասցվել են կենտրոնական զինվորական հոսպիտալ: Հինգ զինվոր վիրահատության է ենթարկվել, երկուսի կյանքը փրկել չի հաջողվել:

ՀԱՄԱՌՈՏ

## Իսրայելը Պաղեստինին հանձնեց արեւմտյան ափի 7 տոկոսը

ԹԵԼ ԱՎԻՎ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐՔ: Իսրայելը պաշտոնապես Պաղեստինի իշխանություններին է հանձնել Հորդանան գետի արեւմտյան ափի 7 տոկոսը: Երուսաղեմում պաշտոնական արարողություն է անցկացվել, որի ժամանակ Իսրայելի բազմական ներկայացուցիչը եւ Պաղեստինի ազգային ուժերի ղեկավարը նոր սահմաններով քարտեզ են ստորագրել: Ենթադրվում է, որ երկուշաբթի օրը կավարտվեն բոլոր ծեւականությունները եւ շինարարները նոր սահմանի վրա քարե մեծաղյուսներ կկանգնեցնեն: Այս ակտը չի նշանակում, որ Պաղեստինի տարածքից զորքերը դուրս կբերվեն, քանի որ Իսրայելը առաջվա նման «պատասխանատու» է տարածաշրջանի անվտանգության համար:

## Ամերիկյան օդուժը նորից է ռմբահարվածներ հասցրել Իրաքին

ԱՆԿԱՐԱ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայում տեղաբաշխված ամերիկյան օդուժն այսօր հերթական անգամ հարվածներ է հասցրել Իրաքի մարտական կազմավարման միջոցներին եւ հակաօդային պաշտպանությանը Մոսուլ քաղաքի հարավային մասում: Բաղդադից 400 կմ հյուսիս: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին հաղորդել է Եվրոպայում ԱՄՆ-ի օդազորային ուժերի հրամանատարությունը: Ռմբակոծումն իրականացրել է F-15 եւ F-16 ռմբակոծիչ կործանիչների օդակը, որոնք թռիչքներ էին գործում՝ վերահսկելով Իրաքի օդային տարածությունը 36-րդ զուգահեռականից հյուսիս՝ այսպես կոչված «արգելված գոտում»: Ի պատասխան բացված կրակի, նրանք լազերային ուղղորդմամբ ռումբեր էին նետել իրաքյան օբյեկտների վրա: Բոլոր ինքնաթիռներն անկորուստ վերադարձել են Թուրքիայի հարավում գտնվող Ինջիրլիկ ավիահանգրվան, ասվում է ամերիկյան հրամանատարության հայտարարության մեջ:

ԲԱՔՈՒ

## Ղարաբաղի հարցում ոչ մի զիջում

### *Հայտարարում են ընդդիմության առաջնորդներ*

ԲԱՔՈՒ, 10 ՕԳՈՍՏՈՍ, ՍՆԱՐՔ: «Հեյդար Ալիեւի կառավարությունն ի վիճակի չէ լուծելու ղարաբաղյան խնդիրը, այդ պատճառով նա պատրաստ է գնալու զիջումների՝ հանուն իշխանության պահպանման: Ադրբեջանի շահերին հակասող քայլեր ձեռնարկելու միջոցով ղարաբաղյան խնդրի կարգավորումը կավարտվի ներկայիս ղեկավարության հրաժարականով»: Այս մասին հայտարարել է Ադրբեջանի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը՝ երեկ կայացած կլոր սեղանի նիստի ժամանակ:

Կլոր սեղանը, որը նվիրված էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ առկա իրավիճակին, անց էր կացվում Բաքվի մամլո ակումբում՝ 525 թերթի եւ Տպավորությունների միավորման նախաձեռնությամբ:

Էլչիբեյը ենթադրում է, որ ղարաբաղյան հարցը կլուծեն երկրի հայրենասիրական ուժերը: Արդարացի հաշտության հասնելու համար Ադրբեջանի ժողովուրդը պետք է նախապատրաստվի պատերազմի, իսկ այսօրվա առաջատար կարգախոսը, Էլչիբեյի ասելով, պետք է դառնա «Մահ հայ գավթիչներին»:

«Մուսավաթ» կուսակցության առաջնորդ Իսա Գամբարը, մեկնաբանելով զիջումների անհրաժեշտության մասին Հեյդար Ալիեւի հայտարարությունը, ասել է, թե 1994 թվականից ի վեր պահպանվող հրադադարի ռեժիմն ամենամեծ զիջումն է հայկական կողմին: Նա նախազգուշացրել է, որ եթե Ադրբեջանի իշխանությունները գնան զիջումների, որոնք կվնասեն ազգային շահերին, ընդդիմությունը վճռական պայքար կսկսի իշխանությունների դեմ:

«Հայաստանի հետ հակամարտությունում հաղթելու համար անհրաժեշտ է ունենալ ուժեղ պետություն, ձերբազատվել կաբառակերությունից ու կոռուպցիայից, անցկացնել բարեփոխումներ: Իսկ դրա համար հարկավոր է գործունակ իշխանություն», ասել է Գամբարը:

Ազգային անկախության կուսակցության կենտրոնական խորհրդի նախագահ Ֆիրուդին Ջալիլովն իր հերթին հայտարարել է, որ ընդդիմությունը քաղաքական ուժերին պետք է կոչ անի զինադադար հայտարարել, միավորել բոլոր ուժերը՝ ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու նպատակով: Ալիեւյան ղեկավարությունն ի զորու չէ լուծելու այդ խնդիրը, նշել է Ջալիլովը:

Ժողովրդական կուսակցության նախագահ Փանահ Հուսեյնովը «դավաճանություն» է համարել զիջումների քաղաքականությունը: Նրա կարծիքով, երկրի մատավորականությունը պետք է պայքարի կոչով դիմի ժողովրդին:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՈՒՇԱԳԻՐ

ԿԱՆԱՁ

## Ալյումինի գործարանի համար հայտարարել միջազգային մրցույթ

### *Մրցույթով ամեն ինչ թափանցիկ է եւ արդյունավետ*

«Յանկացած ձեռնարկության համար, եթե կա մեկից ավելի ներդնող հավակնորդ, եւ հնարավոր չէ նրանց շաղկապել, ապա անպայման պետք է սեփականաշնորհման մրցույթ հայտարարել: Այս դեպքում եւ խիղճներս մաքուր կլինի, եւ կստանամ ավելին»,- «Ազգին» հայտնեց առեւտրի եւ արդյունաբերության առաջին փոխնախարար Սովսեպ Չավարյանը՝ այսօր կառավարությունում կայանալիք «Կանազ» ալյումինի գործարանի սեփականաշնորհման հայեցակարգի քննարկման նախօրեին: «Ազգը» բազմիցս անդրադարձել է Հայաստանի արդյունաբերության եւ տնտեսության զարգացման համար մեծ հեռանկար ունեցող այս ձեռնարկության ներկային եւ ապագային: Գործարանը շնորհիվ ղեկավարության ջանքերի պահպանվել է եւ համեմատաբար բարվոք վիճակում է, սակայն եւս որոշ ժամանակ անց արդեն հնացող սարքավորումներն ու հոսքագծերը կդառնան իրենց դարն ի սպառ ապրած, եւ ամենակարեւորը հնուս մասնագետները կկորցնեն իրենց որակավորումը:

Ալյումինի գործարանի սեփականատեր դառնալու հայտ այսօր ներկայացրել են երեք ընկերություն՝ ֆրանսիական «Իժեսը» եւ ռուսաստանյան «Պետերբուրգսկայա ֆոլգան» ու «Սիբիրսկի ալյումինի» խումբը: Վերջինիս հնարավորությունները առավել բարձր են գնահատվում, սակայն առեւտրի եւ արդյունաբերության առաջին փոխնախարար Սովսեպ Չավարյանն առաջարկում է առավել ճկուն մոտեցում միջազգային մրցույթ, «Կանազի» համար այսօր հայտ են ներկայացրել երեք ընկերություն՝ «Իժեսը», «Սիբալը» եւ «Պետերբուրգսկայա ֆոլգան», իսկ ո՞վ ասաց, թե չկա չորրորդը կամ հինգերորդը: Դիցուք, նույն «Պեշենեն» իր համընդգրկուն կառույցով: Մեզանից ոչ ոք նրանց չի դիմել: Ուստի մրցույթը, իմ կարծիքով, ամենաճիշտ եղանակն է: Որտեղի՞ց, օրինակ, մենք գտանք «Պեռնո Ռիկարին»: Միջազգային մրցույթը եւ նրա հայտագրերը, որոնք տարածվեցին ամբողջ աշխարհում, այս միջազգային ճանաչված ընկերությանը բերեցին Հայաստան: Կրկին շեշտեմ՝ որտեղի՞ց գիտենք, թե «Սիբալն» ամենալավն է, դա այդպես չէ: Կարծում եմ, մրցույթով ամեն ինչ ավելի թափանցիկ կլինի, իսկ դա միշտ օգտակար է: Մրցույթի միջոցով հնարավոր կլինի ստանալ լավագույն պայմաններ գնի եւ ներդրումային ծրագրի առումով», ի ցույց եւ մրցույթի միջոցով գտնել ալյումինի գործարանի պետական սեփականություն հանդիսացող 74 տոկոս բաժնետոմսերի ամենարդյունավետ տիրոջը:

«Ազգի» ընդհանրական հարցին, թե ինչպես է գնահատում արդյունաբերության նախարարությունը սեփականաշնորհման ձգձգումը արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների պարագայում, (առ այսօր սեպ Չավարյանը՝ այսօր կառավարությունում կայանալիք «Կանազ» ալյումինի գործարանի սեփականաշնորհման հայեցակարգի քննարկման նախօրեին: «Ազգը» բազմիցս անդրադարձել է Հայաստանի արդյունաբերության եւ տնտեսության զարգացման համար մեծ հեռանկար ունեցող այս ձեռնարկության ներկային եւ ապագային: Գործարանը շնորհիվ ղեկավարության ջանքերի պահպանվել է եւ համեմատաբար բարվոք վիճակում է, սակայն եւս որոշ ժամանակ անց արդեն հնացող սարքավորումներն ու հոսքագծերը կդառնան իրենց դարն ի սպառ ապրած, եւ ամենակարեւորը հնուս մասնագետները կկորցնեն իրենց որակավորումը:

Ալյումինի գործարանի սեփականատեր դառնալու հայտ այսօր ներկայացրել են երեք ընկերություն՝ ֆրանսիական «Իժեսը» եւ ռուսաստանյան «Պետերբուրգսկայա ֆոլգան» ու «Սիբիրսկի ալյումինի» խումբը: Վերջինիս հնարավորությունները առավել բարձր են գնահատվում, սակայն առեւտրի եւ արդյունաբերության առաջին փոխնախարար Սովսեպ Չավարյանն առաջարկում է առավել ճկուն մոտեցում միջազգային մրցույթ, «Կանազի» համար այսօր հայտ են ներկայացրել երեք ընկերություն՝ «Իժեսը», «Սիբալը» եւ «Պետերբուրգսկայա ֆոլգան», իսկ ո՞վ ասաց, թե չկա չորրորդը կամ հինգերորդը: Դիցուք, նույն «Պեշենեն» իր համընդգրկուն կառույցով: Մեզանից ոչ ոք նրանց չի դիմել: Ուստի մրցույթը, իմ կարծիքով, ամենաճիշտ եղանակն է: Որտեղի՞ց, օրինակ, մենք գտանք «Պեռնո Ռիկարին»: Միջազգային մրցույթը եւ նրա հայտագրերը, որոնք

մի բերեց առաջին փոխնախարարը: Նա ընդգծեց նաեւ, որ չնայած ալյումինի գործարանում պահպանվել է սարքավորումների եւ հոսքագծերի ամբողջությունը, բայց այսօր դրանց որոշ մասն արդեն հնացած է եւ պետք չէ արտադրությանը: Առանց բարդույթների արեւմտյան սեփականատերն արագ աղամոնտաժում է հին սարքավորումները, վաճառում եւ դրա հաշվին վերակառուցում արտադրությունը:

Մեր կողմից հավելենք, որ ֆրանսիական «Իժեսի» ծրագրով նախատեսված է անմիջաբար ալյումինի որակյալ փայլաթիթեղի արտադրությանը ոչ անհրաժեշտ հոսքագծերն աղամոնտաժել, իրացնել եւ ստացված միջոցների հաշվին իրականացնել տեխնիկական վերազինումը: Առաջին փոխնախարարն առաջարկում է արագ գտնել մասնագիտական ընկերություն, որը կօգնի մեզ հայտարարել միջազգային մրցույթը եւ նրա հայտագրերը, որոնք Հայաստանը չի կարողացել մասնավորեցման հաջող գործարք կնքել ծանր արդյունաբերության ձեռնարկություններից որեւէ մեկում), Սովսեպ Չավարյանը պատասխանեց. «Ես չեմ կարող միանշանակ ասել՝ լա՞վ է, թե՞ վատ, որ դեռեւս չի իրականացվում պորտֆելային ձեռնարկությունների սեփականաշնորհումը, որովհետեւ սեփականաշնորհումը չի կարելի դիտարկել ինքնանպատակ, դա սխալ է՝ ի՞նչ տարբերություն, եթե պետական ձեռնարկությունը վատ պետական սեփականատիրոջից անցնում է մյուս վատ, այս անգամ մասնավոր սեփականատիրոջ ձեռքը: Այսպիսի սեփականաշնորհման օրինակներ մենք ունենք: Եվ չափտատող, սակայն մասնավոր ձեռնարկություններ առջեւ ծագած խնդիրները ոչ միայն սեփականատիրոջն են վերաբերում, այլեւ պետությանը: Պետք է լինել համբերատար»:

Ն. ԴԻԼԲԱՐՅԱՆ

## Ոչ վարկը, ոչ վառելանյութը, ոչ էլ ջուրը չեն կարող տվել անվարձահատույց

ԵՐԵՎԱՆ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սեպտեմբերի 10-ին ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանն անցկացրեց հերթական սելեկտորային խորհրդակցությունը, որին մասնակցում էին մարզպետները եւ երեւանի քաղաքապետը: Խորհրդակցությանը ներկա էին օրակարգային հարցերին առնչվող նախարարությունների եւ այլ գերատեսչությունների ղեկավարներ:

Օրակարգում առաջինը գյուղատնտեսական աշխատանքներին վերաբերող հիմնախնդիրներն էին, որոնք ներկայացրեց ՀՀ գյուղնախարար Գագիկ Շահբազյանը: Ներկայումս, ասաց նա, մարզերում ավարտին է մոտենում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը եւ նախապատրաստական աշխատանքներ են տարվում աշնանացանի համար: Հիմնականում բոլոր մարզերում խնդիրները կապված են բերքի մթերման, գյուղատնտեսական վարկերի վերադարձման, ինչպես նաեւ ոռոգման ջրի եւ դիզելային վառելանյութի վարձավճարների գանձման հետ: Նախարարն ասաց, որ արդեն որոշ գյուղերում, որտեղ օգտագործվել է մեծ քանակությամբ ջուր, սակայն վարձերը չեն մուծվել, ստիպված են եղել դիմել ջրազրկման, եւ այդ գյուղերը ոռոգման ջրից զրկված կմնան այնքան ժամանակ, մինչեւ պարտքերը չմարվեն:

Վարչապետը ամենայն մանրամասնությամբ հետաքրքրվեց տարբեր մարզերում խաղողի, հացահատկի, ծխախոտի եւ այլ մշակաբույսերի մթերման ընթացքով: Նա հանձնարարեց համապատասխան մարմիններին՝ ամփոփ տեղեկանք ներկայացնել յուրաքանչյուր մարզում գոյություն ունեցող արտադրական հզորությունների վերաբերյալ, ճշտել դրանց գործարկման նպատակահարմարությունը: Անհրաժեշտ է վերակենդանացնել մայր գործարանները՝ միաժամանակ լուծելով թե մթերման եւ թե աշխատատեղերի խնդիրները, ասաց վարչապետը, նշելով, որ 2000 թվականին արդեն այդ հարցերը հնարավորինս պետք է լուծված լինեն: Այդ նպատակով նա հանձնարարեց նաեւ վիճակագրության նախարարության հետ համատեղ մեկ ամսվա ընթացքում ներկայացնել բոլոր անհրաժեշտ տվյալները ամբողջ հանրապետության մասշտաբով՝ ունենալով 90-95 տոկոսանոց հաշվարկ:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական վարկերին, ապա վարչապետը մեկ անգամ եւս հիշեցրեց, որ միջազգային ֆինանսական տարբեր կազմակերպություններից ստացվող վարկերը նվերներ չեն, ինչպես կարծում են շատերը, այլ տոկոսով տրված պարտքեր են, եւ դրանց վերադարձման հարցը շատ լուրջ է: Դիզվառելանյութը նույնպես պետության կողմից չի կարող անվարձահատույց տվել բնակչությանը, փոխարենը՝ այն գյուղացիական տնտեսությունները, որոնք վճարել են նախորդ տարվա վառելանյութի արժեքը, այս տարի այն կստանան տուկայականից 50% զեղչ գներով, ասաց Վ. Սարգսյանը:

Գյուղատնտեսության հիմնախնդիրները ներկայումս կառավարության ուշադրության կենտրոնում են, եւ, վարչապետի ասելով, նախատեսվում է բոլորովին նոր որակով, նոր հաղթականությամբ սկսել 2000 թվականը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի 2002-ին արդեն գյուղատնտեսության բնագավառում նորմալ ցուցանիշներ արձանագրել:

ՄԱՔՍԻՄԱԼԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## Փախստականների անհամբերությունն առաջադիմում է

«Ազգի» օգոստոսի 9-ի համարում անդրադարձել էինք ճամփորդական փաստաթղթերի առնչությամբ փախստականների եւ միգրացիայի վարչությունում ծավալվող կրքերին եւ հիշյալ փաստաթղթերի հասկացումը միտումնավոր ձգձգելու մասին խոսակցությունների վերաբերյալ վարչության պետ Հովհաննես Սիարոնյանի պարզաբանումներին: Նույն օրը (օգոստոսի 9-ին) փախստականները դիմել էին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան ներկայացուցիչ Ջոնաս Բիրաքին, ներկայացրել իրենց մտավախությունների ու դժգոհությունների ընտրանին, եւ հիասթափությամբ արձանագրել, որ պրն Բիրաքը խորհուրդ էր տվել Հայաստանի քաղաքացիություն ընդունել, մինչդեռ հայկական անձնագիրն, ըստ նրանց, հղի է փախստականի կարգավիճակից զրկվելու մահացու վտանգով:

«Ի՞նչ է տալիս փախստականներին այդ կարգավիճակը» հարցին պատասխանելով, փախստականների վարչությունում հավաքված մեր հայրենակիցներին առաջնորդող Ռոման Ղամբարյանը (որը ներկայացավ Իրաքի սումգայիթցի հայերի իրավունքների պաշտպանության նախաձեռնող խմբի ղեկավար) վկայակոչեց Ադրբեջանում իրենց թողած տունուտեղը, խնայդրամարկղերում կուտակված ռուբլիները, փոխանակության պարտատոմսերը, որոնց դիմաց ոչ մի փոխհատուցում չեն ստացել: Ավելացնենք՝ նաեւ երբեմն-երբեմն փախստականներին բաշխվող մարդասիրական օգնությունը գումարային եւ նյութական (սննդամթերքի եւ հագուստեղենի) դրսեւորումներով, որ, ինչպես նշել էինք նախորդ հրապարակման մեջ, նախատեսված են ամենակարիքավորների համար: Այս մտահոգությունները բարձրաձայն ու կրքոտ քննարկող փախստականների խումբը սաստիկ դժգոհ էր. փախստականների համար նախատեսված գումարները եւ մարդասիրական օգնությունը որպես կանոն շրջանցում են իրենց, փոշիացվում փախստականների հարցերում «մասնագիտացած» հասարակական կազմակերպությունների կողմից: Վերջիններս, նրանց համոզմամբ, «կասկածելի ծրագրեր» են մշակում՝ փախստականներին օգնելու փոխարեն, յուրացնում իրենց ուղղված միջոցները, որ անհայտ խողովակներով հոսում են առուվաճառի տարբեր կետեր:

Դժգոհությունների այլ պատճառներ էլ կան: Փախստականների համար նախատեսված տարեկան օգնությունը չի հրապարակվում, անվճար բուժօգնությունը գրեթե բացառված է, որեւէ աջակցություն չկա փախստականներին աշխատատեղերով ապահովելու հարցում, եւ այլն, եւ այլն: Փախստականներին հուզող խնդիրների մեծ մասն, ի դեպ, նույն չափով անհանգստացնում է նաեւ տեղացիներին եւ երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի անմիջական հետեւանք է: Գլխավոր մտահոգությունը, սակայն, մնում է ճամփորդական փաստաթղթերի հասկացման «միտումնավոր» խոչընդոտումը. խորհրդային անձնագրերով անհնար է տեղաշարժվել ԱՊՀ երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, Ստավրոպոլի, Կրասնոդարի օդանավակայաններից մարդկանց (60-ամյա կանանց, օրինակ) ետ են ուղարկում Հայաստան: Ուստի փախստականների անհանգստությունը հասկանալի է, սակայն հիշեցնենք, որ այդ փաստաթղթերը նրանց կարող են հանձնվել մշակված կարգի հաստատումից հետո միայն, ինչի հետ նրանք համառորեն հաշվի նստել չեն ուզում:

Օգոստոսի 27-ին 51 փախստականների ստորագրությամբ վարչապետ Վազգեն Սարգսյանին ուղղված դիմումում փախստականները պահանջել էին պաշտոնական մամուլում հրապարակել ս.թ. մարտի 27-ին ընդունված փախստականների մասին օրենքը (ըստ նրանց, օրենքն իրենցից թաքցնում են նույն՝ ճամփորդական փաստաթղթեր չտալու միտումով) եւ լուծել ճամփորդական փաստաթղթերի խնդիրը: Երեկ այդ մտահոգությունները ներկայացվելու էին ՀՀ տարածքային կառավարման նախագահ Խոսրով Հարությունյանին, որը համաձայնել էր ընդունել նրանց (մամը 19-ի դրությամբ փախստականների պատվիրակությունը դեռեւս նախարարի ընդունարանում էր): Պաշտոնական մամուլը («ՀՀ» եւ «Ռեսպուբլիկա Արմենիա») արդեն մեկ-երկու տարի չի հրապարակում Ազգային ժողովի ընդունած օրինագծերը, սակայն այս պարագայում գուցե կարելի՞ է խախտել այդ ավանդույթը, իրավասու այլանները էլ, գուցե, արագացնե՞ն ճամփորդական փաստաթղթերի հասկացման կարգի հաստատումը՝ ավելորդ կրքեր չթորթորելու համար:

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

## Ընտրների գումարները խամուն տալը դառնում է հաճախակի

Երեկ Արմենպրեսի մամուլի տրահում սակավաթիվ ՁԼՍ-ների ներկայացուցիչներին ներկայացվեց «Հասարակական խնդիրների ուսումնասիրման կենտրոնի» բողարկած յուրաքանչյուր «գրքույկները» (եթե դրանք այդպես կարելի է անվանել): Կենտրոնի փոխնախագահ Ա. Քանանյանն ասաց. «Մենք հաճախ ենք լսում մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանության մասին, որն էլ հիմք է հանդիսացել ստեղծելու «գրքույկները», որպեսզի ազգաբնակչությունն էլ ավելի լավ տիրապետի իր իրավունքներին»: Սակայն 2 կամ 6 թերթից կազմված այդ յուրաքանչյուր «գրքույկները», որոնք «ՀՀ զինված ուժեր, զորակոչիկի իրավունքներ», «Պետավտոտեսչության եւ վարորդների փոխհարաբերությունների իրավական հիմքերը», «Հարկ վճարողներ, նրանց իրավունքները եւ պարտականությունները», «Նորարարական գործունեության որոշ խնդիրներ» վերնագրերով էին, կարելի էր անվանել պարզապես հիշեցման թերթեր, որոնք ոչ մի օգտակար ու գործնական բնույթ չեն կարող ունենալ: «Եվրասիա» հիմնադրամի օգնությամբ շնորհների գումարները ծախսվել են անճոռնաբար: Կարծում եմ, ժամանակն է ստեղծել մի լուրջ վերտուգիչ մարմին, որը կկարգավորի ու կհսկի, թե նմանատիպ «գրքույկները» մեր բնակչությանը որքա՞ն են նման հրատարակությամբ, նոր միայն գումարները (որոնց չափը չգիտես ինչու, հարկ չհամարեց պատասխանել Ա. Քանանյանը) տրամադրվի ու ծառայի բուն նպատակին: Եթե չէ զուր տեղը շնորհները խամուն տալը կասկածներ է ծնում ստացողների եւ տվողների նկատմամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Հայաստանում տեղի է ունեցել 3 բալանոց երկրաշարժ

ԵՐԵՎԱՆ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սեպտեմբերի 10-ին տեղական ժամանակով ժամը 11.59 Հայաստանում տեղի է ունեցել երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում է Վանաձոր քաղաքից 10 կմ դեպի հարավ-արեւմուտք:

Հայաստանի Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունից հայտնեցին, որ ցնցումների ուժգնությունն էպիկենտրոնում, ինչպես նաեւ Վանաձորում, կազմել է 3 բալ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Հանձնարարական ծառայություն / 562941
Apple Macintosh հանձնարարական ստուգումը «Ազգ» թերթի
Նյութը «Ազգին» պատասխանատու է
Նիւթերը չեն գրախօսում ու չեն վերադարձնում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մտահոգություններ

ԵՐԵՎԱՆ

## «Էմպո-2000»-ին պատշաճ մասնակցությունը իմիջի խնդիր է

### *Հանուկերի համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի պատշաճ մասնակցությունը վտանգի տակ*

Ամբողջ աշխարհն արդեն պատրաստվում է 20-րդ դարավերջի խոշորագույն միջոցառմանը՝ 2000 թվականի հունիսի 1-ից հոկտեմբերի 1-ը Գերմանիայի Հանովեր քաղաքում անցկացվելիք «Էմպո-2000» համաշխարհային ցուցահանդեսին: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, դարավերջի այս խոշորագույն միջոցառումը տարբերվելու է մինչ այժմ եղած միջազգային ցուցահանդեսներից եւ, ունենալով տասնապատիկ մեծ մասշտաբներ ու ընդգրկվածություն, դառնալու է երկիր մոլորակի ազգերի մի յուրահատուկ տոն, որտեղ յուրաքանչյուր պետության խնդիրն է լինելու ներկայացնելու հաջորդ հազարամյակի շեմին իր տեղը համաշխարհային ինտեգրացիայում, իր մշակույթը, պատմությունը, տնտեսական ու մտավոր ներուժը: Հետեւաբար, այս միջոցառմանը պատշաճ ձեւով մասնակցելը յուրաքանչյուր երկրի համար առաջին հերթին իմիջի խնդիր է: Սակայն, դատելով միջոցառմանը Հայաստանի մասնակցության նախապատրաստական աշխատանքներից, տեղեկատվական հոսքից ու նաեւ կառավարական, հասարակական տարբեր շրջանակներում տիրող աննրելի հանգստությունից, մնում է միայն զարմանալ: «Էմպո-2000»-ին Հայաստանի պատշաճ մասնակցության եւ նախապատրաստական աշխատանքները ժամանակին հասցնելու առումով արդեն անհանգստանալու կարիք կա:

«Էմպո-2000»-ի մասնաբաժինն ու կարեւորությունը պատկերացնելու համար բերենք մի քանի թվեր միայն: ցուցահանդեսի տարածքը լինելու է 1,7 մլն քմ, որը վարձակալությամբ տրվելու է մոտ 190 մասնակից երկրների: Հանովերի մոտ գտնվող Կրոնսբերգ բլրի այդ հսկայական տարածքի վրա միաժամանակ կարող են անցկացվել 2000 ֆուտբոլային հանդիպումներ: Այս խոշոր միջոցառման համար Գերմանիան ծախսելու է միլիարդավոր մարկեր, եւ այդպիսի «շեղությունը», բնականաբար, հանրապետության համար ունի քաղաքական նկատառումներ: Բեռլինի պատի փլուզումից 10 տարի անց 5 ամիս ուշադրության կենտրոնում: Ցուցահանդեսի 5 ամիսների ընթացքում Հանովեր կայցելեն մոտ 40 մլն այցելուներ, այդ թվում միայն 4500 հյուրեր մասնակից երկրներից ու 23 հազար լրագրողներ աշխարհի տարբեր ծայրերից: Ենթադրվում է, որ վերոհիշյալ տարածքը ցուցահանդեսի ավարտից հետո դառնալու է տուրիստական կենտրոն ու տարբեր ազգերի մշակույթը ներկայացնող յուրահատուկ բնակավայր:

Հայտնի է, որ մի քանի խոշոր տերություններ արդեն մոտ մեկ տարի է սկսել են հսկայական, մինչեւ 5-10 հազ. քմ ընդգրկող իրենց տարածքների շինարարական, հարդարման աշխատանքները: ԱՄՆ-ը, օրինակ, կառուցում է մի հսկա քաղաք: Ինչպես արդեն տեղեկացվել է, մեր հանրապետության համար հատկացված մոտ 360 հա-ի վրա որպես Հայաստանի խորհրդանիշ կառուցվելու է «Նոյյան տապանի» մանրակերտը: Միայն 23 մ երկարություն ունեցող այդ տապանում առանձին բաժիններով ներկայացվելու են Հայաստանի մշակույթը, գիտությունը, արդյունաբերությունը, ժողովրդական արվեստը, էկոլոգիական, մասնավորապես՝ Սեւանի խնդիրը, նույնիսկ՝ ազգային խոհանոցը: Իսկ այդ ամենի համար պահանջվում է հսկայածավալ աշխատանք, որն առանց Հայաստանի ու սփյուռքի ողջ մտավոր, տեխնիկական ու ֆինանսական ընդգրկվածության հնարավոր չէ իրականացնել: Ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքները համակարգող Նարինե Սահակյանը տեղեկացրեց, որ նախապատրաստական աշխատանքները շարունակվում են, բայց հիմնականում ստեղծագործական մասով: Հույս կա, որ հոկտեմբերի մեկին արդեն պատրաստ կլինի տապանի նախագիծը: Այն իրականացնում է մրցույթով ընտրված գերմանական Imag LTD ընկերությունը, որն էլ արդեն մարտին կսկսի հայկական տաղավարի շինարարությունը եւ ամրիլին, որը վերջին ժամկետն է, կավարտվի: Տիկին Սահակյանն ամեն կերպ փորձում էր հանգստացնել, որ ժամկետային առումով խնդիրներ չկան, ի վերջո, նույն Ռուսաստանի կամ Վրաստանի նախապատրաստական տեմպերը եւս նույնն են, սակայն նա միաժամանակ չժխտեց, որ այսօր կան լուծում պահանջող խնդիրներ, որոնք եթե հետաձգվեն, ահազանգելու կարիք անպայման կլինի: Ամենամեծ խնդիրը ֆինանսների բացակայությունն է: Տաղավարի նախագծի ու շինարարական ծախսերը (400 հազար մարկ) փակելու է գերմանական կառավարությունը, սակայն մի պայմանով՝ եթե Հայաստանը ժամանակին մուծի տաղավարի տարածքի վարձավճարը՝ մոտ 360 հազ. մարկ, ինչը, բնականաբար, Հայաստանի աղքատ բյուջեի դեֆիցիտի պայմաններում անհնար է դառնում: Վճարման առաջին ժամկետը հոկտեմբերի մեկն է, եւ կառավարության խնդիրը պետք է լինի գտնել լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ: Բացի վարձավճարից, հաշվարկված է, որ ցուցահանդեսի 5 ամիսների անցկացման, նյութերի հավաքման, տեղափոխման, պատվիրակության մեկնման, տարբեր բնույթի միջոցառումների համար (հուլիսի 19-ը, օրինակ, հատկացվել է Հայաստանի դիզայներներ եւ այլն), սակայն նրա ֆունկցիան խորհրդանշությունից այն կողմ չի անցնում, մինչդեռ նման խոշորածավալ միջոցառման համար անհրաժեշտ է ունենալ հավաք աշխատանքային խումբ: Քննարկվում է նաեւ ցուցահանդեսի ազգային կոմիտեի (որն այժմ ՀՀ արդյունաբերության ու առեւտրի փոխնախարար Ս. Չավարյանն է) փոփոխության հարցը, որը պետք է լինի առնվազն նախարարի կարգավիճակի պատասխանատու որպես նման միջոցառումը պետության կողմից կարեւորելու առաջադրանք: Կարեւոր է լինելու նաեւ ցուցահանդեսում երկրի պատասխանատու պատվիրակության ներկայացվածությունը, որը, ենթադրվում է, պետք է գլխավորի առնվազն վարչապետը: Ն. Սահակյանի հավաստմամբ, իշխանությունների ամենաբարձր մակարդակներում գիտակցվում է ցուցահանդեսին երկրի պատշաճ մասնակցության կարեւորությունը: Թվում է, թե բյուջեի դեֆիցիտի փակման, սոցիալական, ներքին խնդիրների կողքին «Էմպո-2000» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի մասնակցությունն ու ներկայացվածությունը երկրորդական խնդիր է, սակայն ակնհայտ է, որ եթե ուզում ենք ինտեգրվել աշխարհին ու նրան ներկայանալ որպես հարուստ անցյալ ունեցող ու նաեւ խոստումնալից ազգ ու պետություն, պետք է օգտագործենք նաեւ «Էմպո-2000»-ի ակնկալվող աննախադեպ հնարավորությունները:

«Նոյի հետքերով նորովի հայտնագործենք Հայաստանը», այս է լինելու «Էմպո-2000»-ին մեր երկրի մասնակցության գաղափարն ու նպատակը: Հետեւաբար, պետք է անել ամեն հնարավորը, որպեսզի այդ գաղափարը իսկապես դառնա իրականություն:

ՊԱՅԱՆԵ ՄՈՒՔՈՅԱՆ

ԲԱԺ ՆԱՄԱԿ

## Վարուժան Կարապետյանին ազատելու համար

### *ՀՀ վարչապետ պրն Վազգեն Սարգսյանին*

***Ստույգ տեղեկանալով, որ 1999 թ. օգոստոսի 19-ին 50 ազատամարտիկների եւ հաշմանդամների դիմումը, ինչպես նաեւ օգոստոսի 26-ին ներկայացված 52 հայ մտավորականների ստորագրություններով դիմումը նույն հարցի շուրջ հղված ՀՀ վարչապետ մեծարգո պրն Վազգեն Սարգսյանին, ցայսօր չեն հասել բուն հասցեատիրոջը, հավանաբար շրջագայելով եւ ձգձգվելով կառավարական ստորադաս տարբեր բաժիններում, նպատակահարմար ենք գտնում վերջին դիմումը հրապարակել թերթում բաց նամակի ձեւով:***

Մենք՝ հայրենի մի խումբ մտավորականներս, գիտնականներս, արվեստի գործիչներս՝ գրողներ, նկարիչներ, երաժիշտներ եւ այլք, խորապես մտահոգված լինելով՝ արդեն 17 տարի Ֆրանսիայի բանտերում տառապող մեր սիրելի հայրենակից Վարուժան Կարապետյանի հետզհետե վատթարացող առողջական վիճակով եւ իր գործով, դիմում ենք Ձեզ համազգային նշանակություն ունեցող հետեւյալ երկու կարեւոր հարցով:

1. Խնդրում ենք Ձեր բարձր հեղինակությամբ պատասխանատու դիմել Ֆրանսիայի Հանրապետության կառավարությանը՝ Վարուժան Կարապետյանին շուտափույթ ազատություն շնորհելու համար, որը համայն հայության սրտի բաղձանքն է:

2. Ինչպես Ձեզ հայտնի է, բուժվերականգնողական եւ «Սրբես» կենտրոններում բուժվողների համար արդեն տարիներ ի վեր ստեղծվել է «Ոգեղենով վերառողջացման բանգարան», որն առողջական-սոցիալական վերականգնման խնդիրներ լուծող յուրօրինակ մի հարազատ օթախ է դարձել: Այս բանգարանը (ծարավ աղբյուրի 55ա շ.) վիրավոր ազատամարտիկների եւ հաշմանդամների ցանկությամբ 1999 թ. հունվարից կրում է Վարուժան Կարապետյանի անունը: Այդ մասին տեղեկանալով՝ քաղբանտարկյալ Վարուժան Կարապետյանը սիրահոժար բանգարանին է տրամադրել բանտում ստեղծած իր բազմաթիվ գեղանկարներից:

Մեր խնդրանքն է, որ բազմաբնույթ սոցիալական ծրագրեր իրականացնող Վարուժան Կարապետյանի անվան «Ոգեղենով վերառողջացման բանգարանը» Ձեր կարգադրությամբ, պետական հրամանագրով, իր գործունեության համար կենսականորեն անհրաժեշտ եղող տվյալ դահլիճում ինքնուրույն գործունեություն ունենալու իրավունք տանա, որը նաեւ բյուրավոր ազատամարտիկների եւ հաշմանդամների ցանկությունն է եւ ընդհանրապես մարդկանց խիստ անհրաժեշտ է:

Լիահույս ենք, որ մեր առաջադրած սույն երկու հարցերը Ձեր բարեհաճ

ՁԱՅՆ

## «...Որ ուսումը լինի ձրի»

Նոր ուսումնական տարվա առաջին երկու շաբաթներն անցան: Դպրոցական հերթական սեպտեմբերի 1-ը, չնայած ընդհանուր տնտեսական տրամադրությանը, շատ հաճելի դարձավ դպրոցականների եւ նրանց ծնողների համար այնքան բազմահոգս էր, այնքան պակասություններով լի... Ճիշտ այնպիսի, ինչպիսի տարեցտարի բարելավվելու փոխարեն ավելի վատացող մեր ամբողջ կյանքն է: Նախորդող օրերին Գյումրիում նույնիսկ խոսակցություններ կային, թե նոր ուսարվա մեկնարկը 10-15 օր հետաձգվելու է, քանի որ ստեղծված ֆինանսական վիճակի պատճառով ծնողներն ու դպրոցը պատրաստ չեն դրան: Չզարմանանք: Եթե դեռ մեկ տասնամյակ առաջ հայ ծնողն իր դպրոցահասակ երեխային հորդորում էր սիրել գիրքն ու դպրոցը, դրանցով կաղվել գիտելիքների աշխարհին, արդա հիմա, երբ երեխան թեկուզ վարձով տվող դասագրքի համար հերթական 200-300 դրամն է պահանջում, ծնողն ուզում է գլուխն առնել-կորչել, որ չլսի... Դեռ լավ է, որ իր հերթին հազար պակասություն ունեցող հանրակրթական դպրոցում եւս ուսման վճար մտցնելու՝ 3-4 տարի առաջ հրապարակ նետված բլեյանական (իսկ իրականում երեւի տերպետրոսյանական) գաղափարը գոնե առայժմ չի իրագործվում:

Նույն «փոկիչ» գաղափարի փոխարինողը հավելուրդով գործի է դրված բուհական համակարգում: Միջին եւ դրանից բարձր միավորներ հավաքած քանի՞ դիմորդ այս տարի էլ չփորձեց դառնալ «վճարովի» ուսանող եւ հետո էլ երեւի չի գտնի իր արժանի աղագաձ՝ միայն ընտանիքի անվճարունակության պատճառով: Թող ներվի տնտեսագիտական հետամնացությունս, բայց ոչ մի կերպ հասկանալի չէ, երբ պետական բուհում, դիցուք՝ Գյումրիի մանկավարժական ինստիտուտի անգլերեն լեզվի բաժնում պետպատվերով ընդունելության տեղերի քանակը 7-ն է, իսկ վճարովին 36 կամ 37: Թերեւս հասկանալի լիներ, եթե այս եւ մյուս դեպքերում քվերի հարաբերակցությունը հակառակը լիներ: Թե չէ էլ ի՞նչ պետական: Նույն բուհի նշված մասնագիտությամբ դիմորդներից մեկը 58 միավորով (այդ թվում երկու 20) ընկել է վճարովի բաժին: Այսպես մենք հետեւությամբ կկործանենք մեր ապագան... Քիչ չեն դեպքերը, երբ վճարովի համակարգ ընդունվածներից ոմանք հետո իրենց գիտելիքներով ու ընթացիկ ամենաբարձր առաջադիմությամբ գերազանցում են «անվճարներից» շատերին: Միեւնույն է, նման նույնիսկ ամենափայլուն ուսանողը, ապագա հարկավոր մասնագետը, բացարձակ գերազանցությամբ հասնելով, ասենք, երրորդ կուրս, շատ հանգիստ կարող է բուհից դուրս մնալ՝ ուսման հետագա վճարն առահովել չկարողանալու պատճառով:

Մեր ուսանելին թողած՝ անվերջ սրան-նրան, օտարներին ենք մատնացույց անում, համեմատում անհամեմատելին: Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարությունը մեր բուհերի առաջնեկ, մայր բուհ համալսարանը սրանից 80 տարի առաջ հիմնում էր քաղաքական, տնտեսական ու սոցիալական ծանրագույն պայմաններում, երբ երկիրը դեռ «անծեր խաս ու ավերակների կույտ», անհիշխանության, համաստաված ծով կարիքի ու բվառության մեջ էր: Ահա այս ժամանակ, երբ կենսական բազում անհետաձգելի խնդիրների լուծումից էր կախված լինել-չլինելու հարցը, նորաստեղծ հայոց կառավարությունն իր առաջին հիմնարար ծեռնարկումների թվում ազգային գիտության, կրթության, մշակույթի զարգացմանը պետականորեն զարկ տալու խորհրդաստ քայլեր էր անում: Տասնամյակների հեռվից հաջորդներիս համար որպես չինացող պատգամ են հնչում համալսարանի հանդիսավոր բացման ժամանակ (1919 թ. հունվարի 31, Ալեքսանդրապոլ) հանրային կրթության եւ արվեստի մեր առաջին նախարար Նիկոլ Աղբալյանի հայտնի խոսքերը, որ բերված են Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետությունը» գրքում: «Այն ջահը, ասաց նա, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք եւ կլուսավորե առաջավոր Ասիան»: Եվ մաղթեց, որ «Հայաստանի համալսարանը մայրենի լինի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի...»:

Շատերիս համալսարանական բարի ու իմաստուն դասախոս, անվանի գիտնական-մանկավարժ Թորգոմ Տուխարյանը ժամանակին սովորեցնում էր, թե կյանքում ինչ էլ որ դառնաք՝ հարազատ ժողովրդի պատմությունը լավ իմացեք: Իսկ պատմությունը ոչ միայն նրանով հպարտանալու կամ տխրելու, այլեւ երեւի թե ավելի շուտ նրա համար է, որ մեկ-մեկ ետ նայենք՝ դեպի առաջ ուղիղ ընթանալու համար: 1918 թվականին քաղաքական ու տնտեսական բացառիկ ծանր պայմաններում ստեղծված սովի ու համաճարակների, որբերի ու գաղթականների, ամեն օր սպառնացող արտաքին ահեղ վտանգի դեմ անպաշտպան հանրապետությունում մեկ տարի հետո կյանքը սկսել էր բարելավվել, իսկ երկրորդ տարում այն, առկա դժվարություններով հանդերձ, արդեն տնտեսական ու մշակութային աստիճանական վերելք ներշնչող երկիր էր: Պետականության այս հրաշք-դասագրքի էջերը ե՞րբ պիտի լրջորեն թերթենք...

ԳԵՂԱՄ ՄԱՐՏՈՅԱՆ
Գյումրի

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ազգային

Թվում էր, թե մի քանի հիմնավոր հիշեցումներից եւ ակնարկումներից հետո կընդհատվի եւ կդադարի «աշխարհիկ քառգարեավը Սուրբ Աթոռի սեռոտին», հեղինակները, դասվիրողները, տպագրողները եւ հաղորդողները վերջապես կգիտակցեն, որ կաթողիկոսական առաջիկա ընտրություններին սկզբունքորեն խորթ են աշխարհիկ եղանակներ, այլեւայլ ընտրություններից ժառանգված ձեւեր եւ մեթոդներ, վարկաբեկման դրսեւորումներ...

Ավաղ, շարունակվում է... Հայոց եկեղեցու գործերին անհաղորդ, երբեմ որեւէ մասնակցություն կամ հետաքրքրություն չդրսեւորած անձինք (տես Երեւանում լույս տեսնող զանազան օրաթերթեր) միանգամից դարձել են «ամենատեղյակ», հույժ «իրազեկ», սանձնել են անկոչ «փաստաբանի» կամ «դատախազի» դեր ու... շաղակրատում են մեկի «արժանիքների» եւ մյուսի «արատների» մասին, այն էլ անքաղաքակիությամբ, ավելի քան բափանցիկ շահագրգռվածությամբ:

Ուղղակի անվայել է, էլ չասած, որ «մերկացումների» տենդը շատ հեռուները կարող է տանել, եւ Աստված մի արասցե, կաթողիկոսության թեկնածուներից այս կամ այն անձնավորության վերաբերյալ մտահանգումներն ու կարծիքները կարող են իջնել խոհանոցային կամ պուրակային բամբասանքների մակարդակի, վարկաբեկելով, ուղղակի առաջին հերթին Հայոց եկեղեցին, ամբողջ եռիսկոպոսական դասը, կաթողիկոսական ընտրությունները ամբողջովին, առա վերջում միայն այս կամ այն անձնավորությանը:

Մի՞թե մեր օրերին մեր կաթողիկոսները «հանկարծ կորցրին» իրենց համազգային հմայիչ վեհությունը մեր նոր սերնդի որոշ թղթակիցների մոտ եւ դարձան այս կամ այն նորելուկ թերթի գովազդի նյութ:

Եկեք մի անգամ էլ թերթենք մեր եկեղեցու վերջին շրջանի պատմության էջերը եւ տեսնենք, թե ովքեր են եղել մեր հայրապետները մեր ժողովրդի կյանքում:

Սա այժմեական նյութ է հատկապես այս օրերին, երբ հայրենիքի իշխանությունները նախապատրաստում են Հայաստան-Սփյուռք համաժողովի գումարումը: Մեր եկեղեցու պատմության ծանոթ անձինք երախտագիտության զգացումներով ենք վերհիշում, որ այդ ազգաշեն հարաբերությունները դեռ շատ վաղուց սկսել են մեր երջանկահիշատակ հայոց կաթողիկոսները, իրենց վերապահված իշխանությամբ: Ներսես Աշտարակեցին, Խրիմյան Հայրիկը, Գեւորգ Զ Չորեքչյանը եւ Վազգեն Ա Պալճյանը:

Դեռեւս պատմական ժամանակներից հիշվում է, որ Սբ. Էջմիածինն իր գահակալների շնորհիվ, որպես հովիվ հաջ, որպես եռիսկոպոսական գահիցությունների հարգանքն ու հավատարմությունը Հայ առաքելական եկեղեցու պետերի Ամենայն հայոց հայրապետների նկատմամբ: Իսկ Հայ եկեղեցին, օտար պետությունների մոտ հանդիսացել է հայ համայնքների ներկայացուցչությունը (նույնիսկ Թուրքիայում): Մեր սփյուռքահայ զավակները (կրոնական կամ աշխարհիկ) պահել են վարկն ու կշիռը Հայ եկեղեցու եւ նրա պետի եւ դրանով հաստատել իրենց ինքնությունը եւ բարձրացրել նաեւ իրենց հեղինակությունը օտար պետությունների մոտ:

Այս օրերին թափուր է Հայրապետական գահը եւ Սբ. Էջմիածնի եւ սփյուռքի հարաբերությունների պատմության մեջ, իր բազմաթիվ այցելություններով, ազգային եւ մշակութային գործիչներին կարող հայրենիքի հետ մասնավորապես, նրանց բարեգործությանն առ ի գնահատումն, պարգեւատրեց շքանշաններով եւ նրանց անունները արձանագրեց վեհարանի պատվո տախտակների վրա: Սա կատարվեց այնպիսի մի շրջանում, երբ սփյուռքահայը եթե ոչ հոգեպես, բայց ֆիզիկապես կտրված էր հայրենիքից:

Մեր օրերին էլ էջմիածին- սփյուռք հարաբերությունները շարունակվեցին հանգուցյալ Գարեգին Ա-ի կողմից, թեեւ կարճ տեւեցին նրա հովվապետության օրերը, եւ կիսաս մնացին նրա ծրագրերն այս ուղղությամբ:

Այո, սփյուռքն իր հոգեւոր առաջնորդներով միշտ էլ պահել է իր անվերապահ հարգանքն ու հավատարմությունը Հայ առաքելական եկեղեցու պետերի Ամենայն հայոց հայրապետների նկատմամբ: Իսկ Հայ եկեղեցին, օտար պետությունների մոտ հանդիսացել է հայ համայնքների ներկայացուցչությունը (նույնիսկ Թուրքիայում): Մեր սփյուռքահայ զավակները (կրոնական կամ աշխարհիկ) պահել են վարկն ու կշիռը Հայ եկեղեցու եւ նրա պետի եւ դրանով հաստատել իրենց ինքնությունը եւ բարձրացրել նաեւ իրենց հեղինակությունը օտար պետությունների մոտ:

ԱԶԳ

# Միջազգային

«ՎԱՇԻՆԳՏՈՆ ԹԱՅՄՍ»

## Կովկասյան եռյակը եւ ՆԱՏՕ-ի ներխուժումը

*«Վաշինգտոն թայմսը» բավականաչափ ուշադիր է Անդրկովկասում ծավալվող իրադարձություններին եւ պարբերաբար անդրադառնում է դրանց: Ֆրանսիոյ գործակալության թղթակից Դեյվիդ Շտեռնի եւ Բաքվի միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, Մոնտերեյի միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի հրավիրած գիտնական Էլխան Նուրիեւի հոդվածները՝ տպագրված հաճախ կողմնակալ կարծիք եւ դիրք բռնող այս թերթում, մեր կողմից բարգմանաբար ներկայացվում են ամերիկյան հանրության ուշադրությանն արժանանալուց հետո միայն ուշացումով: Հակառակ այդ ուշացմանը, կարեւոր ենք համարում նման հրապարակումների մատուցումը մեր ընթերցողներին, իրազեկելու համար Մ. Նահանգների մայրաքաղաքում թուրքամետ շրջանակների մոտ տիրող տեսակետների մասին:*

Կոսովոյում սերբական կամայականությունները դադարեցնելուն ուղղված ՆԱՏՕ-ի արշավի արձագանքները Բալկաններից տեղափոխվել են խնդիրներով լի Կովկաս, որտեղ կառավարությունները փորձում են հարավսլավական պատերազմի դրդապատճառները կիրառել իրենց երկրների ազգային փոքրամասնությունների համար:

Հայաստանը, Ադրբեջանը եւ Վրաստանը պնդում են, որ հենց իրենք են տուժող կողմը, եւ եթե Յուսիսատլանտյան դաշինքը միջամտի, ապա միմիայն աջակցելու է իրեն ընդդեմ ագրեսորների:

«Կարծում եմ, որ Կովկասում ՆԱՏՕ-ի գործողությունները ցանկալի կլինեն, AFP-ին հայտարարել է Ադրբեջանի նախագահի արտաքին հաղորդակցության հարցերով խորհրդատու Վաֆա Գուլուզադեն: Ադրբեջանն ինքը ենթարկվում է էթնիկական զտումների: ՆԱՏՕ-ի գործողության շնորհիվ Կոսովոյի փախստականները տուն են վերադառնում: Կարծում եմ, եթե ՆԱՏՕ-ի ուժերը կովկասյան տարածաշրջան բերվեն, ապա հայերը ստիպված կլինեն լքել զավթած տարածքները»:

Գուլուզադեն ավելացրել է, որ կխնդրի ՆԱՏՕ-ի զորքերը «տեղադրել սահմանին խաղաղության բանակցությունները կազմակերպելու համար»:

Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն իր հերթին արձագանքեց Գուլուզադեի վերոհիշյալ հայտարարություններին: Կոսովոյում ալբանացիների զտումները համեմատելով Աբխազիայից վրացիների բռնի տեղահանման հետ: «Ցեղասպանությունը եւ էթնիկական զտումներն անընդունելի են եւ պետք է դատապարտվեն», հայտարարեց Շեւարդնաձեն:

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը Վաշինգտոնում հանրության առջեւ ելույթ ունենալով՝ Ղարաբաղի հայերի վիճակը համեմատեց Կոսովոյի ալբանացիների անկախության համար պայքարի հետ, հաղորդում է Թուրանը: Ի տարբերություն Գուլուզադեի եւ Շեւարդնաձեի, Օսկանյանը ՆԱՏՕ-ին կոչ չարեց միջամտել դարաբաղյան հակամարտությանը՝ բավարարվելով միայն համեմատությամբ, որ դաշինքի մասնակցության դեպքում համանմանորեն պետք է Բաքուն ռմբակոծվեր: Այդ ժամանակ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանան, սակայն, արագորեն փակեց Հարավային Կովկասում դաշինքի ներկայության մասին խոսակցությունները: Բրյուսելում Ռոբերտ Քոչարյանի հետ հանդիպման ընթացքում Սոլանան ասաց, որ դաշինքի մտադրությունների մեջ չի մտնում զորքերի տեղաբաշխումը Կովկասում, ընդհակառակը, իրենք ողջունում են տարածաշրջանի բոլոր երկրների հետ լավ հարաբերությունները:

«Ադրբեջանի եւ Վրաստանի պաշտոնյաները հայտարարություններ արել են ընդամենը Ռուսաստանի եւ Իրանի արձագանքները ստուգելու համար, հայտարարել է արեւմուտքի մի դիվանագետ: Խելագարություն է կարծել, թե ՆԱՏՕ-ն կարող է Հարավային Կովկաս մտնել»: Սակայն Գուլուզադեն լավատես է պնդելով, որ ՆԱՏՕ-ն պետք է աղացուցի, թե մարդու իրավունքները պետք է պաշտպանվեն ոչ միայն Կոսովոյում, այլեւ Անդրկովկասում, որը նույնպես Եվրոպայի մի մասն է:

«Ես գիտեմ, որ ՆԱՏՕ-ի զորքերի տեղակայումն այսօր իրական չէ: Ես գիտեմ, որ վաղը դա նույնպես իրական չի լինելու: Սակայն հիմարություն կլինի ասել, թե դա երբեք տեղի չի ունենա, ասել է Գուլուզադեն: Մենք պետք է խոսենք միմիայն սկզբունքների մասին: Եթե հակամարտությունը լուծված չէ, ապա ՆԱՏՕ-ն պետք է ներքաշվի դրա մեջ»:

## Հայ-ադրբեջանական պատերազմը մոտ է վերսկսվելուն

Հայաստանը եւ Ադրբեջանը, որոնք Արեւմուտքում հիշվում են որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկու կողմեր, հնարավոր է նորից պատերազմի մեջ ներքաշվեն:

Այս անգամ հակամարտությունը կարող է հետեւությամբ ներքաշել երրորդ կողմին՝ ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ի դաշինքին: Կոսովոյի հակամարտությանը համանման, սա նույնպես էթնիկական բախումների պատճառ է դարձել: Սակայն ի տարբերություն Կոսովոյի հարցի, այս դեպքում կարեւոր նշանակություն է ձեռք բերում տարածաշրջանում նավթային խոշոր բնական պահուստների առկայությունը: Այս նավթահանքերը Ռուսաստանը մինչեւ այժմ իր տնօրինության տակ է ենթադրում: Նոր պատերազմի հնարավորությունը Արեւմուտքի ուշադրությանն է արժանացել Ռուսաստանից Հայաստան խոշոր սպառազինությունների փոխադրման մասին մամուլի տեղեկություններից հետո: Իրան-կոնտրայի նմանությամբ այս սկանդալը պայթեց 1997-ին, երբ Ռուսաստանն ավելի քան 1 միլիարդ դոլարի զենք էր ուղարկել Հայաստան: Սույն գործը հետաքննվեց ՌԴ Պետդումայի փակ նիստում, որ ռուսաստանյան ազդեցիկ մի շարք պատգամավորներ, նեղրայալ պատգամավորության նախկին նախագահ Իգոր Ռոդիոնովը, ընդունեցին Հայաստանին սպառազինությունների մատակարարումը, այդ թվում՝ տանկեր, զրահամեքենաներ, հրետանի, «Սկադ» հրթիռներ եւ արձակման կայաններ, հակաօդային պատգամավորության հրթիռներ եւ մեծաքանակ այլ զինամթերք: Ի պատասխան ադրբեջանցիները բազմաթիվ բողոքներ հղեցին Մոսկվա՝ պահանջելով Ռուսաստան վերադարձնել մատակարարված ողջ զինամթերքը:

Մինչ Հայաստանի կառավարության բարձրաստիճան ղեկավարները կտրականապես մերժում էին զինամատակարարումների փաստը, Հայաստանի պատգամավորության նախագահ Վազգեն Սարգսյանը ելույթ ունենալով երեւանի պետական համալսարանում՝ նշեց, որ իր երկրի պատգամավորական հնարավորությունները վերջին 2 տարիների ընթացքում «կրկնապատկվել» են՝ «առանց բյուջեի ծախսերի» ավելացման:

Նավթով հարուստ Ադրբեջանը երկյուղ է կրում, որ Հայաստանը ռուսական աջակցությամբ հարձակում է նախապատրաստում: Հայաստանին զինամթերքի առաքումը կարեւոր դեր է խաղում Ադրբեջանում հայերի հաջողակ մարտարվեստի գործում:

Ի պատասխան Ադրբեջանն առաջարկել է ՆԱՏՕ-ի զորքերը տեղակայել Բաքվի մոտ գտնվող մի ռազմակայանում: Դա կարող է սպառնալ Ռուսաստանի վաղ նախազգուշացման ռադարների գոյությանն այդ տարածքում: Այս առաջարկը ենթադրության ալիք է առաջացրել տարածաշրջանում: Մոսկվան մասնավորապես սխալ է համարել ԱՄՆ-ի զորքերը Կասպիցի շրջան հրավիրելու Ադրբեջանի առաջարկը, ասելով, որ «Բաքուն չպետք է երկյուղ կրի Կովկասում Ռուսաստանի ներկայությունից»:

Սակայն Բաքվի իշխանությունները իրենց ապահովության համար համարժեք քայլերի են դիմում, մասնավորապես Ադրբեջանի պատգամավորության նախագահ Սաֆար Ասիբեյը վերջերս բարձր մակարդակի հանդիպումներ է ունեցել Անկարայում թուրք պատգամավորների հետ՝ հնարավոր ռազմական համագործակցության նպատակով: Ներկայումս ադրբեջանցիների առջեւ երկու հիմնական խնդիր կա ծառացած. ի՞նչ նպատակով են ռուսները այսպիսի մեծածավալ ռազմական օգնություն ցույց տալիս հայերին եւ ինչո՞ւ է Հայաստանին այսչափ զինամթերք անհրաժեշտ:

Ադրբեջանում վստահ են, որ Ռուսաստանն օգտվում է Կովկասում ստեղծված «սառեցված անկայունությունից», որն արդյունավետորեն խոչընդոտում է տարածաշրջանի երկրների անկախությանը եւ զարգացման հեռանկարներին, այդ թվում նավթային կոնսորցիումների մուտքը Կասպիցի տարածք:

Ադրբեջանն արդեն 16 գործարք է կնքել աշխարհի խոշորագույն նավթընկերությունների հետ: Միացյալ Նահանգներն արդեն դարձել է Ադրբեջանի կարեւոր տնտեսական գործընկերներից մեկը: Բաքուն կարծում է, որ տարածաշրջանում Վաշինգտոնի նպատակը հանրապետությունների անկախությանն աջակցումն է եւ Ռուսաստանին Կասպիցի նավթի վերահսկման մենաշնորհից զրկումը:

Պատգամավոր էներգետիկ պատարների մատակարարումը խիստ էական եւ կարեւոր է Միացյալ Նահանգների աշխարհաքաղաքական եւ տնտեսական շահերի համար: Կովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-ի տնտեսական եւ քաղաքական մասնակցությունը կապահովագրի էներգետիկ ոլորտում նրա միլիարդավոր դոլարների ներդրումները:

ԲԱՔՈՒ

## «Ազատություն Ղարաբաղին» նշանաբանով երթ սեպտեմբերի 25-ին

ԲԱՔՈՒ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐ: Հանուն ընտրական բարեփոխումների եւ դեմոկրատական ընտրությունների շարժման նախագահների խորհրդի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած նիստի ժամանակ որոշում է կայացվել սեպտեմբերի 25-ին «Ազատություն Ղարաբաղին» նշանաբանով երթ անցկացնելու առնչությամբ: Այդ մասին հաղորդել է «Յուրդաս» կուսակցության առաջնորդ Մահս Սաֆարլին: Նրա խոսքերով, գործողությունը կանցկացվի հետեւյալ երեք երթուղիներից մեկով՝ Շեխիդլյար Խիյաբանից մինչեւ «Ազադլիգ» հրապարակ, Սաբեդ Վուրդունի անվան զբոսայգուց մինչեւ «Ազադլիգ» հրապարակ եւ, վերջապես, Սգիզբեկովի արձանից մինչեւ «Գելեբե» կինոթատրոն: Մահս Սաֆարլին հաղորդել է, որ այս անգամ ցույցը անորոշման տեղի կունենա: Հիշեցնենք, որ նախկինում երթի անցկացման ժամկետները մի անգամ չէ, որ հետաձգվել են, խանգի Բաքվի քաղաքապետարանը թույլ չէր տալիս անցկացնել այդ միջոցառումը:

## Մեկ տարի թղթակցին՝ Ալիեւի եղբորը վիրավորելու համար

ԲԱՔՈՒ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՍՆԱՐ: Սեպտեմբերի 9-ին Բաքվի Նասիմովի շրջանային դատարանը «Բակինսկի բուլվար» թերթի թղթակից՝ Իրադա Գուսեյնովային մեղավոր է ճանաչել հանածայն Ադրբեջանի քրեական օրենսգրքի 121 (զրպարտություն) եւ 122 (վիրավորանք) հոդվածների: Դատարանը նրան դատապարտել է մեկ տարի ազատազրկման: Դատավճիռը ուժի մեջ կմտնի մեկ տարի անց: Եթե Իրադա Գուսեյնովան որեւէ հանցավորական գործողություն կատարի, ապա դատարանի կայացրած դատավճիռը ի կատար կածվի: Անցած տարվա նոյեմբերին «Բակինսկի բուլվար» թերթում հոդված է տպագրվել «Ադրբեջանի լքարկման ծառայություն» վերնագրով, որտեղ Տալալ Ալիեւը անվանվել է «Բենզակայանի բազավոր»: Գուսեյնովայի այս հոդվածի առնչությամբ նույն տարվա դեկտեմբերին Տալալ Ալիեւը հայց է ներկայացրել դատարան եւ ստացել է այն: Նախագահի եղբորը պատշաճական ներողություն են հայտնել: Միեւնույն ժամանակ, դատարանը որոշում է կայացրել քրեական օրենսգրքի 121 եւ 122 հոդվածներով քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԻՄՈՐ

## Քլինթոնը պատասխան է Ջակարտային

ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը հայտարարել է, որ Ինդոնեզիային տրամադրվող Վաշինգտոնի ֆինանսական օգնության շարունակումը պայմանավորվելու է Արեւելյան Թիմորի ճգնաժամի հարցում Ջակարտայի վարվելաձեւով: Ավելին, նա զգուշացրեց, որ ասիական ֆինանսական տագնապից հետո Ինդոնեզիայի իրականացրած տնտեսական ընդհատման մասին: Քլինթոնը նշել է նաեւ, թե անհնար է չեղյալ համարել մարզում անցկացված հանրաքվեն, շեշտելով, որ Ինդոնեզիան պետք է խնդրի միջազգային հանրության օժանդակությունը, եթե ի վիճակի չէ վերջ դնելու բռնարարքներին:

Միեւնույն ժամանակ, ՍՍԿ-ը սկսել է էվակուացնել իր աշխատակից-

վերակենդանացումը կարող է փլուզվել, եթե կառավարությունը չդադարեցնի մարզի անկախությունը մերժող բանակի եւ զինյալ խմբերի բռնարարքները: ԱՄՆ-ի նախագահը ավելացրել է, որ ոչ ոք Ինդոնեզիայում նեղդումներ չի կատարելու, եթե նրա կառավարությունը թույլատրի, նրա խոսքերով, «կատակերգության» շարունակումը Արեւելյան Թիմորում: Մինչ այդ, ինչպես հաղորդել է BBC-ն, ԱՄՆ-ի պատգամավորության նախագահ Ուիլյամ Քոհենը հայտարարել էր Ջակարտայի հետ ռազմական հարաբերությունների նորից մարզի մայրաքաղաք Դիլիի իր կենտրոնատեղիից, ուր մնացել են ՍՍԿ-ի 100 պատգամավոր, ինչպես նաեւ այնտեղ աղքատանած 2 հազար քաղաքացի, որոնք փախել էին քաղաքում վխտող զինյալների ահաբեկումներից, որոնք օրըստօրե սաստկացել են անկախության հանրաքվեից ի վեր: Այդ բռնարարքների հետեւանքով զոհվել են տասնյակ...մարդիկ, այդ թվում՝ քրիստոնյա, կաթոլիկ հոգեւորականներ, այրվել են տներ ու խանութներ, իսկ տասնյակ հազարավոր քաղաքացիներ արտաքսվել են Արեւելյան Թիմորից:

## Լույս է տեսել «Նյուզուիքի» արաբերեն տարբերակը

Ամերիկյան «Նյուզուիք» ամսագիրը մտադիր է հրատարակել արաբերեն տարբերակ, որը տարածվելու է արաբական աշխարհով: Ամսագրի խոսնակը BBC-ի թղթակցին տեղեկացրել է, որ «Նյուզուիք»-ի այդ տարբերակը շրջանառության մեջ է մտնելու մինչեւ 1999 թ.-ի ավարտը, ավելացնելով, որ ամսագրում զետեղվելիք նյութերի մեծ մասը թարգմանվելու է անգլերենի բաժնից, բայց «ընդգրկելու է նաեւ հավելյալ նյութեր, որոնք առանձնապես ուղղվելու են արաբ ընթերցողներին»: Այս առնչությամբ արաբ որոշ դիտորդներ նշել են, որ ամսագրի արաբերեն տարբերակի տարածումը չի ողջունվել բոլոր երկրներում, որովհետեւ ավելի է ուժեղացնելու ԱՄՆ-ի ազդեցությունը տարածաշրջանում:

ԱՌԱՎՈՏԻ ՍՊԻՏԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մշակույթ

# Երբ խոցվում է մարդու խիղճը

## Առիթ՝ խորհրդածելու Դոստոեւսկու մասին

*Որքան բաներ կան, Հորացիո, երկնքում եւ երկրի վրա,*
*Որ երբեւիցե փիլիսոփայությունդ չէ իսկ երազել...*

*Շեքսպիր, «Համլետ»*

Այո, որքան բաներ կան, որ տեսնելով՝ չէիր տեսել, զգալով՝ չէիր զգացել: Չեռֆդ հոել էիր Ակրոպոլիսի մարմարե սյուներին ու այդ մարմարի ջերմությունն էիր զգացել, այնդ տեսել էր Աթենքի փողոցներն ու տները... Հետո պիտի գար Կիպրոսը, Մելգոնյան կրթական հաստատությունը, Շեքսպիրը պիտի տար հաստ, սեւակազմ մի գիրք՝ Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ» վեպի անգլերեն թարգմանությունը: Դու պիտի վազեիր ծաղկած սիմոզաների պուրակը, ամբողջ օրը թափվեիր այնտեղ՝ մոռանալով եւ դաս, եւ ճաշ, ու մթնշաղը միայն ստիպեր քեզ ուշի գալ...

– Կարդացի ու ցնցվեցի: Տիեզերական գոյի եւ մարդկային հոգու անհասակ խորություններ սկսեցին բացվել իմ ներքին հայացքի առաջ: Որոշեցի անմիջապես թարգմանել... Սակայն առաջին ոգեւորությունս անցավ, երբ մեկ-երկու էջ թարգմանելուց հետո իսկույն հասկացա, ի բարեբախտություն ինձ, թե առայժմ դա իմ գործը չէ. տասնյոթ տարեկան եմ, ոչ կենսափորձ ունեմ, ոչ գրական փորձ, նաեւ չգիտեմ բնագրի լեզուն՝ ռուսերեն չգիտեմ. մի խոսքով, իրավունք չունեմ այդպիսի գործ ձեռնարկելու...

Հետո, մեկ տարի անց, պատերազմը պետք է վերջանար, դու պետք է ավարտեիր Մելգոնյան վարժարանը, վերադառնայիր Հունաստան՝ ծնողներիդ մոտ, սկսվեր զանգվածային հայրենադարձությունը: Քսանմեկ տարեկանում հրաժարվելով Բրյուսելի համալսարանում որպես Նուպարյան ֆոնդի տան ուսումդ շարունակելու առաջարկից, ծնողներիդ հետ պետք է Սովետական Հայաստան գայիր: Աթենքից Հայաստան էիր հասցրել Դոստոեւսկու վեպերի անգլերեն ու ֆրանսերեն թարգմանությունները, հատկապես «Կարամազով եղբայրներ»: Չեռֆդ վեցհիր «Ոճիր եւ պատիժ» վեպը բնագրով, սակայն անօգնական նայում էիր գրի էջերին, ոչինչ չէիր հասկանում: «Կարամազով եղբայրների» Կոնստանս Գառնեթի անգլերեն թարգմանությունն այլեւս քեզ չէր բավարարում: Դու ուզում էիր այդ հզոր գործը կարդալ բնագրով ու հնչեցնել հայերեն: Ինչո՞ւ...

– «Թարգմանիչ» բառը մի հատուկ լուսապտակ է ունեցել հայ դպրության մեջ, ժողովուրդը սրբացրել է մեր հին թարգմանիչներին, որոնք դեռ 5-րդ դարում թարգմանական արվեստի անթառամ նմուշներ տվեցին մեզ եւ իրենց սեփական ինքնուրույն գործերն էլ գրելով՝ մեր գրականության հիմնադիրները դարձան: Ես ուզում էի որդիաբար, համեստորեն արժանի լինել նրանց նվիրական ավանդույթներին՝ թարգմանելով նոր ժամանակների համաշխարհային գրականության մեծագույն երկերից մեկը: Ես ուզում էի այնպես թարգմանել, որ այդ երկն էլ հայոց լեզվով հնչի որպես մեր մայրենի գրականության սեփականությունը, մանավանդ որ, աշխատանքի ընթացքում, Դոստոեւսկու յուրօրինակ հանճարի մեջ ընդհանուր բան էի գտել հայ գրականության մեծագույն հանճարի՝ Գրիգոր Նարեկացու հետ:

– Ո՞րն է Նարեկացու եւ Դոստոեւսկու հոգեւոր կապը:

– Ինձ թվում է, Նարեկացին եւս Դոստոեւսկու պիտակ, հոգեհարազատ հեղինակներից կլինեիր ու կոգեկոչվեր նրա ստեղծագործության մեջ, եթե «Մատյան ողբերգության» պոեմը պիտայտնի լիներ աշխարհին, որովհետեւ իր ծավալով ու ընդգրկումներով վիթխարի այդ պոեմի բուն խնդիրը մարդկային կեցության իմաստի որոնումն է եւ բարեհորոգման տենչը, կատարելության ձգտումը՝ հոբյան երկփեղկվածության տառապալից խռովով, տիտանական մենախոսության տակ թաքնված ներքին դրամատիկ-ողբերգական երկխոսության միջոցով, այսինքն՝ ներքին պայքարով, ըստ որում պոեմի ոգին ու ոճն էլ շատ բանով առնչվում են «Հոբի գրքին»:

– Ես հասկանում եմ այդ հոգեվիճակը, Դոստոեւսկիով գայթակղությամբ են նկարագրված տեղանքը, քաղաքները, ճանապարհները, վանքերը, բայց նա, ի վերջո, կարծես բոլորին զանց է առնում աշխարհի էվկլիդյան պատկերացումը եւ կարծես աներեւակայելի, անհավանական ճշմարտություններ է բացահայտում:

**– Կարիք կա՞ր, արդյոք, այդպես մանրամասն ուսումնասիրել, այդքան դժվարություններ հաղթահարել, այդքան ճանապարհներ անցնել: Կարելի էր, չէ՞, թեկուզ նկուղային հարկում նստած թարգմանել գործը, անգամ եթե դա Դոստոեւսկու գործն է ու նույնիսկ՝**

**«Կարամազով եղբայրները»:**

– Եթե այդպես չտիպի անես,մի թարգմանիր: Նվիրումով ու սրբագործելու զգացողությամբ պիտի մոտենաս թարգմանությանը: Ինձ համար թարգմանությունը վերստեղծում է... «Կարամազով եղբայրները» թարգմանելուց հետո մտադրվել էի Դոստոեւսկու հնգամատյանը թարգմանել. վերաթարգմանել «Ոճիր եւ պատիժը» եւ «Ապուշը», առա թարգմանել «Պատանի» եւ «Դեւեր» վեպերը: Նույնիսկ սկսեցի «Դեւերի» թարգմանությունը, որովհետեւ նախնական պայմանավորվածություն ունեի Պետհրատի ղեկավարության հետ: Վեպի մեկ երրորդն արդեն թարգմանել էի, ձեռագիրը թեւիս տակ գնացի հրատարակչություն, տեսա, որ տնօրենի աթոռին նոր մարդ էր նստած՝ Վահագն Մկրտչյանը: Ինձ հետ պայմանագիր չկնքեց, ասաց, որ «ռեակցիոն» վեպ է, նույնիսկ Գորկին է ժամանակին ասել: Ինձ միջոց անգամ չտրվեց բացատրելու, որ Գորկին նկատի է ունեցել վեպի հիման վրա ստեղծված բեմադրությունը: Հարցը գնաց, հասավ Հայաստանի Կոմկուսի կենտկոմ... է՞, եթե հարցը գնում, կենտկոմ էր հասնում, ուրեմն չէր լուծվելու, չէ՞...

**– Անհեթեթ ժամանակները մեզանից անպակաս են:**

– Էլ մի ասա: Հիշում եմ, 1952 թիվն էր: Կոշկակար հայրս տանը կոշիկ կարելու թույլտվություն ուներ: Մի փոքրիկ խուց էի սարքել, որ գիշերով գրում էի պատմվածքներ, էսսեներ, երկու վեպ: Մինչեւ ուշ գիշեր այդ խցիկում լույսը կասկածելի էր թվացել ֆինբաժին կոչված հիմնարկի տեսուչին, որը մի օր գիշերով մտավ խուցս, որպեսզի իբր թե գաղտնի կարած կոշիկները հայտնաբերի: Բայց սեղանի վրա թղթեր էին: «Ի՞նչ է, շտիոնական թղթե՞ր ես գրում»: Հասկանում էի, որ ֆինբաժնի տեսուչը միայն ֆինբաժնին չէ, որ ծառայում էր: Ու խուզարկելու վախից վառեցի ձեռագրերս: Տարիս առաջացել է, բայց հասկանում եմ, որ իմ ստեղծագործական եռանդի միայն հինգերորդ մասն եմ օգտագործել: Մնացած 80 առ հարյուրը ծախսվել է սալինյան ու հետսալինյան շրջանի տագնապներով, տուն շինելով, շինած տունս իմ ձեռքերով քանդելով, նորից շինելով, վախերով, ընտանեկան, կենցաղային տակնուվայրություններով...

**Այս ժամանակներն էլ կանցնեն: Պատմությունը մեզ համար անպայման կպահպանի Կարոիս Սուրենյան անունը՝ ոչ որպես «շտիոնական թղթեր գրողի», այլ «Բնիկ որդեցի՞ եմ», «Արեւորդիներ», «Ոգու ամրոցներ», «Երանության կղզին» գրքերի հեղինակի, Դոստոեւսկու գործերի հիանալի թարգմանչի, Գուլսուորդիի «Ֆորսայթների պատմությունը» 6 հատորանոց վեպի թարգմանչի, մարդու, որն անվերջ ներքին պայքարի մեջ է եղել ու գրքեր ամբողջությամբ հասկացել է այդ ներքին պայքարի տիտաններին: Շնորհակալ լինենք բախտից, որ մեր կողքին անել Կարոիս Սուրենյան ունենք:**

ՄԵՐԳԵՑ ԳԱԼՈՅԱՆ

ԱՐՎԵՍՏ

# Գեորգի Սարաջեւին նվիրված փառատոն

Դաշնակահար, մանկավարժ, Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Գեորգի Սարաջեւը հայկական դաշնամուրային դպրոցի հիմնադիրներից է: Նա մեծ ներդրում ունի կատարողական արվեստի զարգացման ու հարստացման, երաժշտական կադրերի պատրաստման գործում: Ավարտելով Լենինգրադի կոնսերվատորիան եւ ասպիրանտուրան, նա տեղափոխվել է Հայաստան եւ երաժշտական եռանդուն գործունեություն ծավալել: Անժամանակ մահը նրան թույլ չի տվել իրականացնելու ստեղծագործական բոլոր մտահղացումները:

Անվանի երաժշտական գործչի ծննդյան 80-ամյակին է նվիրված Երեւանում անցկացվող դաշնամուրային երաժշտության փառատոնը, որի անդրանիկ համերգը տեղի ունեցավ Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Փառատոնի հաջորդ մի քանի համերգները տեղի կունենան Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում:

Հայ, ռուս եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործությունների կատարմամբ հանդես կգան միջազգային մրցույթի դափնեկիր, Գեորգի Սարաջեւի անվան կրթաթոշակառու Գրիգոր Ասմարյանը, միջազգային մրցույթի դափնեկիր, պրոֆեսոր Անահիտ Ներսիսյանը, հանրապետության վաստակավոր արտիստուհի Զեմֆիրա Բարսեղյանը, ինչպես նաեւ Երեւանի կոնսերվատորիայի սաները:

Փառատոնի եզրափակիչ համերգը տեղի կունենա «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

ՆՈՒՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

# Լեւոն Շանթի «Կայսրը»

## Գլուխներ հայրենի բեմում

Հայկական հազարամյա թատերարվեստի ջահն արտերկրում վառ պահելու համար 15 տարի առաջ Լոս Անջելեսում ժան Նշանյանի եւ Շաֆե Թուխմանյանի ջանքերով հիմնադրվեց «Վարդան Աճեմյան» թատրոնը: Անցած մեկուկես տասնամյակում թատրոնի ստեղծագործական խումբն արտասահմանի հայահոծ գաղութներից մեկում հայ դասական եւ ժամանակակից հեղինակների գործերը հայրենի հանդիսատեսին ներկայացնելու բեղուն գործունեություն է ծավալել: Թատրոնը ջանացել է նաեւ մշտապես կապ պահպանել մայր հայրենիքի հետ: Եղել են փոխայցելություններ:

«Թատրոն» բարեգործական հիմնադրամի հրավերով երեւան ժամանեցին Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբի հիմնադիրներ ժան Նշանյանը եւ Շաֆե Թուխմանյանը: Սեպտեմբերի 21-ին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում նրանց եւ Երեւանի դրամատիկական թատրոնի արտիստներ Վլադիմիր Մարյանի, Գուժ Մանուկյանի, ժասմեն Մարյանի, Մակիչ Մարգարյանի, Լուիզա Դամբարյանի, Ռոբերտ Հարությունյանի ուժերով կներկայացվի Լեւոն Շանթի «Կայսր» թատերգությունը:

Այս առիթով զրուցեցի «Թատրոն» բարեգործական հիմնադրամի տնօրեն Մակիչ Մարգարյանի եւ ժողովրդական դերասան Վլադիմիր Մարյանի հետ:

**Մակիչ Մարգարյան.**

– Լեւոն Շանթի «Կայսր» թատերգության ներկայացումը, որը պիտի իրականանա հայրենի բեմում, նվիրված է Վարդան Աճեմյանի ծննդյան 95-ամյակին: Այդ նշանակալի տարելիցին է նվիրված նաեւ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային թատրոնի նոր 75-րդ թատերաշրջանը: Ներկայացման մասնակիցների հիմնական մասն էլ մեծ դերասանատեսի սաներն են: ժան Նշանյանի եւ Շաֆե Թուխմանյանի այցելությունը հայրենիք իրականացվում է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» կարգախոսի շրջանակներում:

**Վլադիմիր Մարյան.**

– Սա փոխադարձ այցելություն է: Ընթացիկ տարվա փետրվար ամսին ես եւ Գուժ Մանուկյանը «Վարդան Աճեմյան» թատերախմբի հրավերով Լոս Անջելեսում էինք: Մենք մասնակցեցինք «Կայսր» թատերգության ներկայացմանը: Պետք է ասել, որ «Վարդան Աճեմյան» թատերախումբը Լոս Անջելեսում բարձր հեղինակություն ունի: Լավ հանդիսատես ունի: Թատերախմբի անդամները Հայաստանից տեղափոխված արվեստագետներ են, ովքեր թատրոնի նվիրյալներ են: Նրանց գործունեությունը նպաստակամղված է արտերկրում հայրենի թատերական արվեստի հարուստ ավանդույթների պահպանմանն ու տարածմանը:

ՀՐԱՉՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ՊԱՆՉԵՐԸ» ՄԵՋ ՈՒ ՉԵՋ

# Վերաշինարարներ

Գրականությունը բխում է կյանքից... գրականությունից... տառապած լինելուց... մեծ երջանկությունից... ազատ ժամանակ շատ ունենալուց... երկարաձգվող մենակությունից... զայրանալուց... իշխանությանը փաստացիորեն հակադարձելու անզորությունից... ռոմանտիկական մասնագիտության հրապուրանքից... որպես ապրուստ վաստակելու միջոց՝ արբունքի շրջանում սիրո մեծ թափից... շնչահեղձ անող ենթագիտակցությունից ազատվելու մղումով... ի հեռուկս մարմնի մահվան՝ մարդկությանը հիշատակ թողնելու ցանկությունից... հայրենասիրությունից... մարդասիրությունից... մարդայացությունից... հրատարակվելու հնարավորության առկայությունից... ավելի բարձր մակարդակով սիրային կամ ամուսնական կապ հաստատելու նպատակասլացումից... գրաքննադատությամբ կամ լրագրությամբ զբաղվելուց հետո, գալով այն եզրակացության, որ ի վիճակի ես ստեղծելու գեղարվեստական արժեքներ... որպեսզի վայելես երիտասարդների եւ պատանիների հիացմունքի ու քեզ հետ շփվելու հաճույքը... հոնորարն աշխատավարձից գերադասելուց (առավել եւս, որ բնակչությանը հարկավոր է աշխատանք եւ համբերություն մինչեւ աշխատավարձն ստանալը)... քեզ թերագնահատած հարազատներին ֆո տաղանդի փաստն ապացուցելու համար... արկածալի ու բազմաբովանդակ յուրահատուկ կյանք ունենալուց... ֆո մասնագիտական գործունեության անբավարարությունից... գրական գործիչ հայր, եղբայր կամ ազգական ունենալուց... ազատությունդ բազմապիսի եւ լիարժեք վայելելու պատրանքից... գրավաճառների ապրուստ ապահովելու համար, հրատարակիչներին՝ նույնպես... Բայց ամենից առաջ գրականությունը բխում է... գրաճանաչ լինելուց:

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ


# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 14–17-ը տեղի կունենա ակադեմիկոս ՌՈՒԲԵՆ ՁԱՐՅԱՆԻ ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով:

*Բացումը սեպտեմբերի 14-ին, ժ. 11-ին, ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում: Հաջորդ նիստերը սեպտեմբերի 15-ին, 16-ին եւ 17-ին, ժամը 11-ին, ՀՀ ԳԱԱ Սովետի ինստիտուտում:*


digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մարզական

ՀՈԲԵԼՅԱՆ

## Սպորտին նվիրած կյանք

### Վահրամ Առաքելյանի 50-ամյակը

Բոլորեց ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ռեկտոր, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վահրամ Բազմասերի Առաքելյանի 50 տարին, որից չորս տասնամյակից ավելին նվիրաբերել է սպորտին: Նա լայն ճանաչում ունեցող եւ հեղինակություն վայելող անհատականություն է հանրապետության մարզական աշխարհում, կրթամշակութային բնագավառում. սպորտի վարպետ է, վաստակավոր մարզիչ:

Վ. Առաքելյանը ծնվել է Աշտարակի շրջանի Փարպի գյուղում, սերում է մարզական ընտանիից: Հայրը՝ Բազմասեր Գրիգորյանը, ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ էր, սպորտի վարպետ, վաստակավոր մարզիչ, եղել է ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի բազմակի չեմպիոն, Անդրկովկասի առաջնությունների հաղթող: Նա է հիմնադրել Փարպի գյուղի հանրահայտ մարզադպրոցը եւ ըմբշամարտիկների մի ամբողջ սերունդ դաստիարակել: Փարպին 20-ից ավելի սպորտի վարպետների եւ 5 վաստակավոր մարզիչների օրրան է:

Մարզական նման հագեցած միջավայրում էլ, 6-7 տարեկանից սկսում է ծեւավորվել առաքա ազատ ոճի ըմբիշ Վահրամ Առաքելյանը: Մասնակցում էր դպրոցի ու գյուղի առաջնություններին, ծեռք բերում անհրաժեշտ ունակություններ, աստիճանաբար տիրապետում նոր հնարքների: Անսահման սեր ուներ սպորտի, մասնավորապես իր ընտրած ազատ ոճի ըմբշամարտի նկատմամբ: Ու երբ 1965-ին ավարտում է գյուղի միջնակարգը, առանց երկմտանքի ոտք դնում է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի շեմին, փայլուն կերպով հանձնում է ընդունելության քննությունները, դառնում ուսանող: Ասել է թե գնում է հոր հետքերով...

Առաջին իսկ օրվանից ուսանող-մարզիկի շեֆությունը ստանձնում է ճանաչված մարզիչ Շահեն Ջանյանը, որին նա պարտական է իր հետագա մարզական հաջողությունների համար: Վահրամը 17 տարեկանում առաջին անգամ ուժերը փորձում է Հայաստանի պատանեկան առաջնությունում եւ ըմբոշխնում հաղթող դառնալու հաճելի պահի խաղցրությունը: Այդ օրվանից էլ ծայր է առնում նրա մարզական հաղթարշավը: Բազմիցս մասնակցում է Հայաստանի պատանիների ու մեծահասակների գոտեմարտերին եւ արժանանում չեմպիոնի կոչման կամ դառնում մրցանակակիր: Հանդես է գալիս նաեւ Միության եւ միութենական «Սեւան» մարզընկերության մրցագորգերում եւ գրավում մրցանակային տեղեր: Տասնյակ գոտեմարտեր է ունեցել, հաղթել է նաեւ իր քաջային կարգի ճանաչված ըմբիշների, որոնք տարբեր չեմպիոնական տիտղոսներ են ունեցել:

Առաջնակարգ ըմբիշը նաեւ առաջադեմ ու ակտիվ ուսանող էր, խոր գիտելիքներ էր ամբարում անխիտ բոլոր առարկաներից, դրսեւորում հետազոտական աշխատանք կատարելու ունակություններ: Եվ միանգամայն օրինաչափ էր, որ ինստիտուտն ավարտելուց անմիջապես հետո, 1970-ին, նրան դասախոս են կարգում ըմբշամարտի ամբիոնում:

Երիտասարդ դասախոսը գիտության մեջ խորանալու ծարավ ուներ, ինստիտուտի ղեկավարությունն էլ գոհ է նրա գիտահետազոտական որոշումների արդյունքներից եւ գործուղում է Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի համամիութենական ինստիտուտ նոպատակային ասպիրանտուրա: Երեք տարվա ուսումնառությունից հետո վերադառնում է հարազատ բուհ եւ նորից աշխատանքի անցնում ըմբշամարտի ամբիոնում, այս անգամ ավագ դասախոսի պաշտոնով: Եռանդագին շարունակում է գիտահետազոտական աշխատանքը: Անդուլ տքնանքի արդյունքը դառնում է թեկնածուական գիտական ատենախոսության պաշտպանությունը: Թեման օրախնդրական էր եւ հույժ կարեւոր՝ «Բարձրակարգ ըմբիշների մարմնի քաշի կարգավորումը պատասխանատու մրցումներին նախապատրաստվելուց առաջ»: Այն այսօր էլ արդիական նշանակություն ունի եւ անհրաժեշտ է ինչպես մարզիկներին, այնպես էլ մարզիչներին:

Վահրամ Առաքելյանը փորձառու դասախոս էր եւ ծեւավորված հմուտ գիտական օժտված կազմակերպչական ունակություններով, եւ բնավ զարմանալի չէր, որ ըմբշամարտի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար մրցույթում պաշտպանվում է նրա թեկնածությունը: Մեկ տասնամյակ ամբիոնի ղեկը հաջողությամբ վարելուց հետո, նորից մրցութային կարգով նրան է վստահվում մարզչական ֆակուլտետի ղեկավարումը: Երկու պաշտոններում էլ նա դրսեւորում է կազմակերպչի ու դասատուի լավագույն հատկություններ՝ հավասարապես ուշադրության կիզակետում պահելով եւ ուսումնական ու մարզական, եւ դասատվական-կրթական ոլորտները: Նա արմատապես բարելավում է ամբիոնի ու դեկանատի գործունեությունը, նպաստում դասավանդման ու մարզման մակարդակի բարձրացմանը: Այդ ամենի շնորհիվ աճում են շնորհալի շատ մարզիկներ, որոնք ինստիտուտի պատիվը բարձր են պահում հեղինակավոր շատ մրցաշարերում: Այդ տարիների նրա մանկավարժական բեղմնավոր գործունեությունը գնահատվում է հավուր պատշաճի. արժանանում է դոցենտի, ապա պրոֆեսորի կոչման:

Վահրամ Առաքելյանի գործունեության ոլորտը չի սահմանափակվել ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտով: Երկար տարիներ նա մարզել է ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականները եւ դրանք ղեկավարել աշխարհի ու Եվրոպայի մեծահասակների ու երիտասարդների առաջնություններում: Նա ազատ ոճի ըմբշամարտի հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահն է եւ անուրանալի ներդրում ունի մարզածեւը Հայաստանում զարգացնելու գործում: Օրերս նա ուղեկցեց այդ մարզածեւի հանրապետական հավաքական թիմին աշխարհի առաջնությանը մասնակցելու համար:

ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունը անցած տարվա օգոստոսին պրոֆեսոր Վահրամ Առաքելյանին վստահեց ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ղեկը: Ու թեեւ ընդամենը մեկ տարի է անցել, նորընծա ռեկտորը հասցրել է շատ բան անել ինչպես ուսումնագիտական, դասատվական ու մարզական, այնպես էլ տնտեսական բնագավառներում: Ինստիտուտում էապես բարձրացել է դասախոսական անձնակազմի եւ ուսանողության պատասխանատվությունը, բարելավվել են ուսումնական ու մարզումային աշխատանքները, ուսանողների մանկավարժական պրակտիկան արդյունավետորեն անցկացնելու նպատակով ստեղծվել է պրակտիկայի դեպարտամենտ, լուրջ քայլեր են արվում հանրակրթական դպրոցները ֆիզկուլտուրայի դասատուներով ապահովելու համար: Միջազգային մրցաշարերում հաղթած եւ մրցանակակիր դարձած ուսանողները մեծարվում եւ պարգեւատրվում են հանդիսավոր պայմաններում:

Այսօր արդեն ինստիտուտի ուսանողներն ու Հայաստանի հավաքական թիմերը կարող են մարզումներն անցկացնել խնամով նորոգված ու կահավորված մարզադահլիճում: Իսկ ջեռուցման համակարգի վերագործարկումը պարզապես համառ ջանքերի արգասիք է:

Շատ են Վահրամ Առաքելյան ռեկտորի նախաձեռնությամբ կատարված գործերն ու վերափոխումները: Շատ են նաեւ լավ մտահղացումները, որոնք կյանքի կկոչվեն առաջիկայում:

Այս ամենին հավելենք, որ Վահրամ Առաքելյանը հասարակական կարգով վարում է օլիմպիական ազգային ակադեմիայի գործերը եւ իր նպաստը բերում Հայաստանում օլիմպիական շարժումը զարգացնելու եւ օլիմպիական գաղափարները տարածելու գործում:

ԱՐՏԱՎԱԶԴ ՍԱՐԳՍՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

## Ֆրանսիացիները բարձր են գնահատում հայ ֆուտբոլիստների խաղը

ԵՐԵՎԱՆ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Ֆրանսիայի հավաքականի հաղթանակը Երեւանում՝ 3:2 հաշվով, այդ երկրի մարզական մամուլը դիտում է որպես շատ հարաբերական հաջողություն: Ֆրանսիացի լրագրողները, մասնավորապես, նշում են, որ Ֆրանսիայի հավաքականը միայն էր մնում պարտություն կրեր առաջին խաղակեսում եւ միայն Յուրի Ջորկաեֆի իրացրած 11 մետրանոցը թույլ տվեց հավասարեցնել հաշիվը: Իհարկե, երկրորդ խաղակեսը ֆրանսիացիները ավելի հաջող անցկացրին, խփելով երկու գոլ (Զիդան, Լալանդ), բայց եւ հայ ֆուտբոլիստները զենքերը վայր չդրեցին եւ կարողացան պատասխան գոլ խփելով (Շահգելդյան), հասնել պատվավոր հաշվի:

Նշելով Հայաստանի հավաքականի հաջող խաղը՝ ֆրանսիական մարզական լրագրողներն առանձնացնում են դարպասապահ Ռոման Բերեզովսկուն, նշելով, որ նա մեղմ չունի բաց թողած գոլերում:

## Ընկերական հանդիպումներ

Ինչպես գիտեք, եվրոպայի հերթական առաջնության եզրափակիչ փուլը տեղի կունենա Հոլանդիայում եւ Բելգիայում, եկող տարվա ամռանը:

Այս երկու երկրների հավաքականները, որոնք ազատված են ընտրական հոգսերից, ընկերական խաղ անցկացրեցին Ռոտերդամում: Հանդիպումն ավարտվեց բարձրակարգ թիմերի խաղին ոչ բնորոշ հաշվով՝ 5-5: Մասնագետները խստորեն քննադատեցին երկու թիմերի ֆուտբոլիստների գործողությունները՝ ասելով, թե նրանք անլուրջ խաղ ցուցադրեցին: Ավելացնենք, որ հոլանդացի Պատրիկ Կլյույվերտը 3 գնդակ խփեց մրցակից թիմի դարպասը:

Երկու ընկերական հանդիպում անցկացրեցին Արգենտինայի եւ Բրազիլիայի ընտրանիները: Երկու անհաշտ մրցակիցների Բուենոս Այրեսում կայացած առաջին խաղը հաջողություն բերեց արգենտինացիներին, որոնք հաղթեցին 2-0 հաշվով: Սակայն երկրորդում աշխարհի քառակի չեմպիոնները՝ բրազիլացիները՝ կարողացան նույնքան համոզիչ առավելության հասնել՝ մրցակցին պարտության մատնելով 4-2 հաշվով:

ՀԵՅԱՆՎԱՅԻՆ ՍՊՈՐՏ

## Առաջատարը Աբրահամ Օլանոն է

Իսպանիայի ճանապարհներով ընթացող բազմօրյա հեծանվավազքում՝ «Վուելտայում» փոխվեց առաջատարը: Նախորդ երեք փուլերում հաղթած Մարցել Կյուսը (Գերմանիա) 5-րդ փուլում շատ ետ մնաց եւ առաջատարներին այժմ համարյա 22 րոպե է զիջում:

5-րդ փուլում վերջնագիծն առաջինը հասեց Յան Ուլրիխը (Գերմանիա), որը 165 կմ լեռնային մրցաշարածությունը հաղթահարեց 3 ժամ 52 րոպե 56 վարկյանում: Ուլրիխը, որը «Տուր դե Ֆրանսի» 1997-ի հաղթողն է, համարյա մեկ տարի մրցումներում հանդես չէր գալիս վնասվածքի պատճառով: Գերմանացի հեծանվորդից միայն մի փոքր ետ մնաց «Վուելտա-98»-ի չեմպիոն Աբրահամ Օլանոն (Իսպանիա): Սակայն հենց նա էլ 5-րդ փուլից հետո գլխավորում է հեծանվավազքը, քանի որ միավորներ շահեց միջանկյալ վերջնագծերում: Ուլրիխը ընդհանուր հաշվարկում երկրորդն է:

ԹԵՆԻՍ

## Առաջին չեմպիոնները որոշվեցին

ԱՄՆ-ի բաց առաջնությունում որոշվեցին առաջին հաղթողները: Խառը զուգախաղերի եզրափակիչում Այի Սուգիյամա (Ճապոնիա)-Մագեղ Բիուդաշի (Հնդկաստան) երկյակը երկու խաղափուլում հաղթեց ամերիկացի բենիսիոս կիմբերլի Պոյին ու Դոնալդ Ջոնսոնին եւ նվաճեցին չեմպիոնի կոչումը: Ընդ որում, Բիուդաշին կարող է նաեւ ԱՄՆ-ի կրկնակի չեմպիոն դառնալ, եթե իր հայրենակից Լեանդեր Պայեսի հետ հաղթի տղամարդկանց զուգախաղերում:

Սակայն բոլորին առավել հետաքրքրում են անհատական մրցաշարերը: Ե՛վ տղամարդկանց, ե՛ւ կանանց մրցումները վճռական փուլ են թեւակոխել, առջեւում կիսաեզրափակիչ խաղերն են:

Տղամարդկանց քառորդ եզրափակիչ հանդիպումներում թերեւս միայն Անդրե Աղասին (ԱՄՆ) համեմատաբար հեշտ հաղթանակ տարավ Նիկոլա Էսկյուդեի (Ֆրանսիա) նկատմամբ՝ 7-6, 6-3, 6-4: Այդ փուլի մյուս երեք խաղերն անցան լափազանց համառ պայքարում: Եվգենի Կաֆելնիկովը (Ռուսաստան), որը անհավասար է խաղում, ի վերջո 7-6, 7-6, 3-6, 1-6, 7-6 հաշվով պարտության մատնեց Ռիխարդ Կրայչեկին (Հոլանդիա): Այժմ կիսաեզրափակիչ խաղում Կաֆելնիկովը կհանդիպի Աղասիի հետ: Մասնագետները համարում են, որ այս երկու բենիսիստներից մեկն էլ կնվաճի չեմպիոնի կոչումը: Մյուս կիսաեզրափակիչ զույգը կազմել են ամերիկացի Ջոդ Մարտինը եւ ֆրանսիացի Սեդրիկ Պիոլինը: Մարտինը պարտության մատնեց չեխ Պավել Դոսեդելին (6-3, 5-7, 6-4, 6-4), իսկ Պիոլինը՝ բրազիլացի Գուստավո Կուերտենին (4-6, 7-6, 7-6, 7-6): Հատկապես համառ պայքար ծավալվեց այս վերջին խաղում. այն 3,5 ժամից ավելի տեւեց:

Կանանց մրցաշարում եւս հետաքրքիր իրադարձություններ են տեղի ունեցել: Քառորդ եզրափակիչ խաղերում Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա) հաղթեց Անկե Հուբերին (Գերմանիա)՝ 6-2, 6-2, Լինդսեյ Դեւենպորտը (ԱՄՆ)՝ Մերի Պիրսին (Ֆրանսիա)՝ 6-2, 3-6, 7-5, Վենուս Ուիլյամսը (ԱՄՆ)՝ Բարբարա Շետին (Ավստրիա)՝ 6-4, 6-3, Սերենա Ուիլյամսը (ԱՄՆ)՝ Մոնիկա Սելեշին (ԱՄՆ)՝ 4-6, 6-3, 6-2: Կիսաեզրափակիչներում կհանդիպեն Հինգիս-Վ. Ուիլյամս եւ Դեւենպորտ-Ս. Ուիլյամս զույգերը: Գուցե իրականանա՞ Վենուսի եւ Սերենա հոր «տրամաբանությունը», մրցաշարից առաջ նա ասում էր, որ եզրափակիչում չեմպիոնուհու կոչումը իր դուստրերը կվիճարկեն: Իհարկե, դրան համաձայն չեն աշխարհի առաջին եւ երկրորդ բենիսիստուհիներ Հինգիսն ու Դեւենպորտը...

digitised by A.R.A.R.@

ՅԱԼԹԱՅԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

# Համագործակցության ուղիների որոնում

*Սկիզբը էջ 1*

Եվրոպայի ատոմահամաղամական իրավիճակի եւ եվրաինտեգրացիոն գործունեության փոփոխությունների դարաշրջանում Յալթայի գագաթաժողովը նախատեսում է հասարակ բարության եւ սեւծովյան նախաձեռնության դասական տեղն ու դերը՝ նոր հազարամյակի շեմին: Գլխավոր ճնշարկող բնութագրերն են նոր ատոմահամաղամական իրավիճակում տնտեսական, մարդասիրական, ժողովրդավարության աջակցման ուղղությամբ հանգործակցությունը, անվտանգության ու կայունության ուղղված ոչ ավանդական սպառնալիքների դեմ պայքարը, տրանսազգային հանձնվերոպական եւ տարածաշրջանային կառույցների ու նախաձեռնությունների շրջանակներում հանգործակցության միտումներն ու հեռանկարները:

Նախագահ Կուչմայի բացման խոսքից հետո հաջորդաբար ելույթ ունեցան Ադրբեջանի, Բուլգարիայի, Հայաստանի եւ Վրաստանի նախագահները: Ի դեմ, բացի Ռ. Քոչարյանից, որը ելույթ ունեցավ առանձին, մյուս նախագահները ելույթ ունեցան մայրենի լեզուներով: Դա, իհարկե, դժգոհության պատճառ բերեց մամուլի կենտրոնում հավաքված լրագրողների շրջանում, ովքեր պատեղ ելույթները չէին թարգմանվում:

Իր ելույթում Պիեռը Բալթյան-սեւծովյան հանգործակցության շրջանակներում կարեւորեց մեծ մեծախի ճանապարհի կառուցումը, հատկապես այդ շրջանակներում դրված ենթակառուցվածքային եւ տրանսպորտային ծրագրերը: Նա ընդգծեց նոր հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը նոր՝ տարածաշրջանային պայմաններում:

Բնականաբար Պիեռը չշրջանցեց Ղարաբաղի խնդիրը: Նա կարեւորեց 1994 թ. հաստատված հրադադարի դահեկանությունը: Ըստ նրա, ԼՂ հարցը պետք է լուծվի Ղարաբաղին ամենաբարձր կարգի ինքնավարության շնորհումով՝ Սինսկի խմբի շրջանակներում, միջազգային իրավունքին համաձայն:

Իր ելույթում նախագահ Քոչարյանը ցավ հայտնեց, որ ԵԱՀԿ կողմից մեկ տարի առաջ արված առաջարկը, ի տարբերություն ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի, Ադրբեջանը չի ընդունել: Հակառակ դեպքում այսօր արդեն չէր լինի առանձին փախստականների խնդիրը, ինչը սուր է դրված 3 կողմերի համար էլ:

Եղած կոնֆլիկտների տնտեսական կարգավորումը ՀՀ նախագահը համարեց տարածաշրջանային հանգործակցության զարգացման առաջնային գրավական: ՀՀ-ն գտնվում է Եվրոպայի եւ Ասիայի խաչմերուկում, որտեղ մինչ օրս ընթացող ավանդույթ գործընթացները պայմանավորված են նոր ատոմահամաղամական իրավիճակով: Այդ հանգամանքները պայմանավորում են ՀՀ արտաքին քաղաքականությունը՝ հիմնված փոխզիջումների վրա: Համաժողովի համատեքստում նախագահը նշեց ՀՀ արտաքին քաղաքականության երկու մոտեցում՝ առաջինը եվրահինտեգրացիոն գործընթացների անհրաժեշտությունն է, որի պայմաններում ՀՀ-ն պետք է գտնի իր տեղն ու դերը եվրոպական ճարտարապետության մեջ: Երկրորդը՝ գլոբալ եւ տարածաշրջանային հակամարտությունների հաղթահարման ուղիների որոնումն է եւ ոչ դրանց առումը: ՀՀ-ն գործուն քայլեր է անում եվրոպական երկրների հետ մերձեցման: Դրան նոր որակ է հաղորդում եվրամիության հետ այս տարի ստորագրած համաձայնագիրը: Ըստ Ռ. Քոչարյանի, միանալով նոր նախաձեռնություններին, ընդլայնելով եւ խորացնելով հանգործակցությունը, հնարավոր կլինի հասնել կայունության եւ տնտեսական զարգացման: Նրա խոսքերով, համագործակցության գլխավոր ազդակները պետք է դառնան ժողովրդավարական սկզբունքների ամրացումը եւ տնտեսության դրական փոփոխությունները:

Այսօր «Միջոցների երկրների համագործակցության մարդկային չափանիշները» զեկուցմամբ համաժողովում հանդես կգա ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Ներսիսյանը:

Ծրագրված է, որ համաժողովի մասնակիցները կընդունեն համատեղ հայտարարություն:

Համաժողովի շրջանակներում ծրագրված են մի շարք երկկողմ հանդիպումներ: Մասնավորապես, շաբաթ օրը նախագահ Ռոբերտ Քոչարյանը կհանդիպի էստոնիայի նախագահ Լենարտ Մերիի եւ Լեհաստանի նախագահ Ալեքսանդր Կվասնեւսկու հետ: Լրագրողների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացրել ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի եւ Ադրբեջանի արտգործնախարար Թ. Զուլֆուգարովի հանդիպումը: Ուշ երեկոյան տպավորություն էր Ռոբերտ Քոչարյանի եւ Հեյդար Ալիեւի հանդիպումը:

Սեպտեմբերի 11-ին կկայանան մասնակից երկրների ղեկավարների, ինչպես նաեւ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի առանձին մամուլի ասուլիսները: Նույն օրը երեկոյան ՀՀ պատվիրակությունը կվերադառնա Երեւան:

# Անցած 10 տարիներին տրանսպորտային պատահարներին զոհ է գնացել մինչեւ 16 տարեկան 469 երեխա

ԵՐԵՎԱՆ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐԱՐԱՏ: Վերջին 10 տարիների ընթացքում տեղի ունեցած 2076 ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով մահացել է մինչեւ 16 տարեկան 469 երեխա, մարմնական վնասվածքներ ստացել՝ 1819-ը: Վիճակագրական այս տխուր տվյալները հայտնեց ՆԳ նախարարության ոստիկանության վարչության վերլուծական բաժնի խորհրդության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Էդուարդ Կոստանդյանը: Ամենաշատ պատահարները գրանցվել են 1989-90 թվականներին, որից հետո դեպքերի նվազում է նկատվել, այնուհետեւ աճ է գրանցվել 1995-96թթ.: Տխուր ցուցանիշ գլխավորում են Երեւանը, Կոտայքը, Էջմիածինը, Գյումրին: 1998թ. 202 պատահարի հետեւանքով զոհվել է 35 եւ մարմնական վնասվածքներ ստացել 194 երեխա: Ընթացիկ տարվա անցած ութ ամիսներին պատահարները նվազել են 14,2 տոկոսով, մահերի թիվը՝ 41,9 տոկոսով, վիրավորներինը՝ 21 տոկոսով:


**Институт открытого общества.**
**Фонд содействия-Армения.**

**Медицина Здравоохранение**

*Институт Альберта Швайцера в сотрудничестве с Институтом открытого общества фонд содействия- Армения организуют конкурс для участия врачей и медсестер в конференции на тему: "Оказание первой медицинской помощи нуждающимся слоям населения".*

*Конференция состоится с 11-15-ое октября в Будапеште.*

*Врачам и медсестрам, желающим принять участие в конференции необходимо представить краткую автобиографию (CV), мотивацию цели участия в конференции и 2 рекомендательных письма.*

*Срок представления документов до 16-ти ч. 24 сентября 1999 г.*

*Для получения дополнительной информации необходимо обратиться в ИООФС-Армения по следующему адресу:*

*г. Ереван, ул. Айседора 536, тел: 272119, 271713*


# ՀԵՌՈՒՏԱՑՈՒՑԱԳՐԵՐ

## 11 սեպտեմբեր

10.00 Հայլուր
10.20 Մուլտֆիլմեր «Ուրախ ավլոները», «Շլված-չտեսնված»
10.40 Մարդը եւ բնությունը
11.05 Կինոնկար երեխաների համար. «Թոքի Մաքֆիկ»
12.30 Երգում է Սոնա Ղազարյանը
13.10 Գ/Ֆ «Շղջիկ»
15.30 Քառուղիներ
16.00 Մարզաշխարհ
16.35 Հող եւ ջուր
17.00 Հայլուր
17.20 Ոսկեփորիկ
18.00 «Անլռելի զանգակատուն»
19.00 Խորան լուսո
19.10 Ազդարար
19.30 Հեռուստաբրիալ «Կրեր»
20.25 Կամուրջ. «Ֆրեզնոյի հայերը»
21.00 Հայլուր
21.40 Շինում
22.15 Բոհեմ
22.55 Ճաղանակ
23.45 Գ/Ֆ «Գլորիա»
00.00 Հայլուր
00.15 Ֆիլմի շարունակությունը

**Մշակույթ**
19.00 Մուլտիպլիկացիոն ֆիլմ «Անհաղթը»
19.10 Առաքական քաղաքակրթություն. Շիրակա ավազե աշտարակներ
20.00 «Լավատեսության անատոմիա»
20.30 Լրաբեր
21.05 Սերիալ «Ֆլամանդական գաղտնիներ» (4-րդ մաս)
22.00 Սիրելի զմփոնաս
22.15 «Մշակույթ» հեռուստաալիքը ներկայացնում է «Դրոնթեյս» ֆիլմը
23.05 Գեղարվեստական ֆիլմ «Փախուստ»
01.10 Լրաբեր

## 12 սեպտեմբեր

11.00 «Ինչպես հասնել կատարելության». Թեյփինգ Սինդի Քրոֆորդի հետ
12.00 Տոմար
14.00 Ոչ նշանավոր մարդկանց կյանքը
14.25 Գ/Ֆ «Կիրոզ մարդասպանը 2»
16.00, 17.30 Մուլտֆիլմ
16.20 Հեռագիծ
17.05 Գիտաստեր
19.00 Գ/Ֆ «Վայելիների քաղաքը»
21.10 Շղջիկ
21.30 Երաժշտական վերհուշ
22.00 Խուժան ալիք
22.30 «Յոթ քար» լրատվական վերլուծական ծրագիր
23.00 Գ/Ֆ «Ժամանում»

8.30 Գ/Ֆ «Մարտական մեքենայի անձնակազմ» (դերերում Վ. Վիխրով, Լ. Յանովսկի, Ս. Մակովեցկի)
9.35 Գյուղական տեղեկատու
10.00 Սենն ինչ հնարավոր է
10.30 Դիսկոթեկուրս «Բաղային ոճամանություններ»
11.00 Նորություններ
11.15 Քանի դեռ բոլորը տանն են
11.50 Սերիալ. ընտանեկան կատակերգություն «Ալֆ»
12.25 Կոիլովի «Անլուրջ նոթերը»
12.40 Ծաղայում եմ հայրենիքին
13.15 Վաղորդյան ասող
14.00 Սերիալ «Նավաթոս Կուստոյի թիմի բոլոր ճանապարհորդությունները»
14.50 Նվագիր. հարմոն սիրելի
15.20 Ծիծաղի համայնապատկեր. Եվգենի Պետրոսյան
16.00 Նորություններ
16.15 Ճանապարհորդների ակումբ
17.05 Ֆուտբոլի տեսություն
17.35 Դիսկոթեկուրս «Շիոն ու Դեյլը»
18.00 Դիսկոթեկուրս «Ալադին»
18.30 Փոկարարները
19.00 Իրինա Ռոդինա. եւ սառույց. եւ արցունքներ. եւ սեր
20.00 «Երազաշ»
20.10 Գ/Ֆ «Միմինո» (դերերում Ս. Մկրտչյան, Վ. Կիկաբիձե)
22.00 Սերգեյ Դարենկոյի հեղինակային ծրագիրը
22.55 ՈՒՀԱ-99 (երաժշտական փառատոն Յուրմալայում)
01.30 Ֆլոդոր Կոնյուխովը «Լուսամփոփ» ծրագրում
02.00 Դետեկտիվ սերիալ «Մայլ Համմեր». «Յոթ մեռած այծեր»

9.00 Ծաղայում եմ հայրենիքին
9.30 Մանկական զվարճալի ծրագիր «Գանձերի կղզին»
10.30 Հեռուստախաղ «Մանկան տուրքերով»
11.00 Քարի լույս, երկիր
11.30 «Անելագ» եւ ընկ.
12.30 Զգուշացեմ, մոդերն է
13.00 Ռուսական լուսո
13.40 Գրքերի աշխարհը Լեոնիդ Կուտավլյովի հետ
14.00 Լուրեր
14.20 Դաշնություն
15.00 Սերիալ «Օրթեմ եւ կարգ»
16.00 Երկխոսություններ կենդանիների մասին
17.00 Հին բնակարան. 1991 թիվ (2-րդ մաս)
18.00 Կասկուլի միջազգային կինոփառատոնի գլխավոր մրցանակակիրը. վավերագրական ֆիլմ «Խաչ»
18.30 Դոսյե. «Գազաոներ. Օրեգոր»
19.00 Հայելու մոտ
19.15 «Ռուսիա» կինոթատրոն. Նիկոլայ Ռիբնիկովը «Աղջիկն առանց հասցեի» ֆիլմում
21.00 Հայելի
22.00 Ժամանցային բեսպսելեր. Գ/Ֆ «Սասանի» (ԱՄՆ, 1-ին մաս)
23.45 Ազաթա Քրիստի. Պուարո. «Կոնի բոլորը»
00.50 «42»-ը ներկայացնում է
01.45 Երաժշտի բաժանմունք

## 13 սեպտեմբեր

17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմեր «Ցողունիկը», «Սոր գեսնյա մեծ ոստահանդեսը»
18.00 Հեռուստաբրիալ «Մոխրոտը»
19.00 Մարդու իրավունքները
19.30 Ցեռագիր
20.00 Հիթ ֆեսթ
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Հեռուստակատալոգ
21.45 Այսօր
22.10 Կրկնվող ֆիլմերի էկրան. Գ/Ֆ «Վերադարձ»
23.40 Հենց այնպես
00.00 Հայլուր
00.20 Կեսգիշերային ճեղքնքաց
01.20 Ուրիկոն+
Արբանյակային հեռարձակմամբ
02.00 Հեռուստաբրիալ «Իմ երկրորդ մայրը»

**Մշակույթ**
19.00 Մուլտիպլիկացիոն ֆիլմ «Ոռիկների այլափոխությունը»
19.10 Բնաշխարհ. «Կենդանիներն էլ են կանչում»
19.40 «Ռիվերանս». Մայլլ Ֆիթլի
20.05 Մարզաշխարհն անցած շաբաթ
20.30 Լրաբեր
21.05 Սերիալ «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» (1-ին մաս)
22.20 Սիրելի զմփոնաս
22.35 Գեղարվեստական ֆիլմ «Սեւ կակաչ»
00.30 Լրաբեր

9.00 Տոմար
ավարտին Յոթ քար (կրկնություն)
19.00 «Շղջիկը» ներկայացնում է. բնաշխարհ
19.30, 21.30, 23.30, 2.30 Սուրհանդակ
19.50 Ավետա
20.10 Գ/Ֆ «Կենաց ջուր»
20.30 Սարդարեզ
21.05 Շղջիկ
21.50 Գ/Ֆ «Վիշապների կայարան»
24.00 Անդորր
0.05 Երաժշտական դադար
0.10 Գ/Ֆ «Կռու դոդոշ-3»
2.10 Երաժշտական վերհուշ

7.00 Քարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Հաճելիների դաշտ
16.00 Նորություններ
16.15 Մուլտսեանս «Դե, սդասիր»
16.35 Աստղային ժամ
17.30 ...Մինչեւ 16 եւ բարձր
17.40 Սերիալ. քաղաքական դետեկտիվ «ՏԱՍՍ-ը լիազորված է հայտարարել»
19.00 Նորություններ
19.15 Ծիծաղի համայնապատկեր. Եվգենի Պետրոսյան
19.45 Այսօր եւ հիմա
20.05 Երկուսաբթին Վ. Պոզների հետ. «Դիմակով մարդիկ»
20.45 Սերիալ «Հանուն սիրո»
21.45 Քարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.40 Թերեւս
22.50 Գ/Ֆ «Մարմիններ առեւանգողները» (ռեժ. Ս. Ֆերրարա, դերերում Ջ. Քինեյ, Ս. Թիլլի, ԱՄՆ, 1987 թ.)
24.25 «Հայացք»
01.10 Նորություններ
01.25 Գ/Ֆ «Ծնունդ ընտրյալոր» (դերերում Գ. Մխիթարյան, ի. Պոլինա, Ե. Տուրկինա, 1998 թ.)

7.30-10.20 Քարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հերթապահ բաժանմունք
10.20 Հոմեոպատիա եւ առողջություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Սերիալ «Միլեդի»
11.50 Սերիալ «Մեր գաղտնիքի ամառը»
12.50 Հոմեոպատիա եւ առողջություն
13.00 Հայելի
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.20 Երկու դաշնամուր
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.10 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Մուլտսերիալ «Ծովաձեր»
18.20 Աշխարհ
19.00 Սերիալ «Կոմիսար Ռեքսը» (Ավստրիա-Գերմանիա)
20.30 «Սոիտակ թուրակ» ակումբ
21.00 Ռուսական սերիա. հեռուստաբրիալ «Սովորական ճշմարտություններ»
22.45 Համաշխարհային բեսպսելեր. «Սասանի» (2-րդ սերիա)
00.35 Հրադարակախոսական բոլ-շոու «Ինչպես ենք ապրելու»
00.55 Հերթապահ բաժանմունք
01.15 Ավետոնու
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (590000), տեղեկագրով (1200 դրամ), սկավառակով (3600 դրամ), INTERNET ցանցով (www.arminco.com/spyur; spyur.acc.am; armscape.com/spyur)

«Սփյուռք Մամ» հասարակագիտական տարեգիրք, Երեւան-23, Աբովյանյան 2 հասցեի բիր 65. Դասիլ 69149. Պատուեր 1116 Տպաքանակը 4000 Ստորագրված է տպագրության 10.09.1999 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@